

Կիպրահայ

ՀՀ Սփիւռքի նախարարի Աշխատանքային Այցը Կիպրոսի Հանրապետութիւն

20-22 Դեկտեմբեր 2014-ին՝ ՀՀ սփիւռքի Նախարար Հրանտուշ Յակոբեան աշխատանքային այցով գտնուեցաւ Կիպրոսի Հանրապետութիւն:

ՀՀ սփիւռքի նախարարը Յունաստանի մօտ ՀՀ դեսպան Գագիկ Ղալաչեանի ուղեկցութեամբ այցելեց Նիկոսիոյ Սուրբ Աստուածածին եկեղեցին և ներկայ գտնուեցաւ Սուրբ պատարագին:



Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ, նախարարը հանդիպում ունեցաւ թեմական ժողովի և Ազգային իշխանութեան անդամներու հետ: Քննարկուեցան կիպրահայ համայնքի հիմնախնդիրներուն, Կիպրոսի մէջ գործող հայկական դպրոցներուն, մշակութային և հոգեւոր կեդրոններուն վերաբերող հարցեր:

ՀՀ սփիւռքի նախարարը Նարեկ վարժարաններու տնօրէն Վերա

Թահմազեանին յանձնեց ՀՀ նախագահի հրամանագրով շնորհուած «Մովսէս Խորենացի» շքանշանը, բարձր գնահատելով վերջինիս ջանքերը՝ կիպրահայ համայնքէն ներս, հայ մատաղ սերունդի հայեցի դաստիարակութիւնը կենսագործելու գործին մէջ:

Նախարարը կիպրահայ գործիչ, աւագ արիապետ Յարութիւն Անմահունիին յանձնեց ՀՀ պաշտպանութեան նախարարութեան «Դրաստամատ Կանայեան» շքանշանը առ ի գնահատանք անոր բարոյական եւ նիւթական մշտատեւ աջակցութեան հայոց բանակին:

Այցելելով Կիպրոսի խորհրդարան, ՀՀ սփիւռքի նախարարը հանդիպում ունեցաւ Ներկայացուցիչներու պալատի նախկին նախագահ, սոցիալ-դեմոկրատական քաղաքական կուսակցութեան (EDEK) ղեկավար Վասսոս Լիսսարիտիսի հետ և վերջինիս յանձնեց ՀՀ Նախագահի հրամանագրով շնորհուած «Մխիթար Գոշ» պատուանշանը: Հանդիպման ներկայ էին խորհրդարանական բոլոր խմբացութիւններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ՝ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Նարեկ Արքեպիսկոպոսը, Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանը:

Այնուհետեւ նախարար Հրանուշ Յակոբեանը այցելեց Նիկոսիոյ Նարեկ վարժարանը, ուր հանդիպում ունեցաւ ուսուցիչներու և աշակերտներու հետ, լսեց անոնց մտահոգութիւնները և շնորհակալական խօսքը՝ ուղղուած ՀՀ սփիւռքի նախարարութեան՝ իրենց գործունէութեան հանդէպ մշտական ուշադրութեան և աջակցութեան համար:

Նախարար Հրանուշ Յակոբեան այցելեց նաեւ Նիկոսիոյ Հայ բարեգործական ընդհանուր միութեան (ՀԲԸՄ) և Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան հայ երիտասարդաց ակումբները (ՀՄԸՄ-ՀԵՄ), մասնակցեցաւ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ երգչախումբի համերգին ու անոր յաջորդող տօնավաճարին: Նախարարը հանդէս եկաւ ելոյթով և բարձր գնահատեց երգչախումբի դերը հայ երգն ու մշակոյթը համայնքին մէջ պահպանելու և յաւուր պատշաճի ներկայացնելու գործին մէջ: Նախարարը երգչախումբը հրաւիրեց մասնակցելու 2016-ին կայանալիք «Իմ Հայաստան» համահայկական փառատօնին:

ՀՀ սփիւռքի նախարարը եղաւ նաեւ Կիպրոսի ռատիոկայանի մօտ, ուր հարցազրոյց տուաւ միաժամանակ «Հայկական ժամ» ծրագրին և «Արձագանգ» ամսաթերթին:

Կիպրոսի ներկայացուցիչներու պալատի հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանը, ի պատիւ ՀՀ սփիւռքի նախարարի այցին, կազմակերպեց ընդունելութիւն, որուն ներկայ եղան հայկական կազմակերպութիւններու և միութիւններու ատենապետներ, ներկայացուցիչներ:

Այցի ողջ ընթացքին, ՀՀ սփիւռքի նախարարին ուղեկից եղաւ Յունաստանի մօտ ՀՀ դեսպան Գագիկ Ղալաչեանը:

Աղբիւր՝ Սփիւռքի Նախարարութեան տեղեկատուական մամուլ

ԱՄԱՆՈՐԵԱՅ ԵՒ Ս. ԾՆՆՂԵԱՆ ՀՈԳԵՊԱՐԱՐ ՀԱՄԵՐԳԸ

Կիրակի 21 Դեկտեմբեր 2014-ին՝ Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ խնկաբոյր



կամարներուն տակ, տեղի ունեցաւ Ամանորեայ եւ Ս. Ծննդեան հոգեպարար համերգը Ս. Աստուածածին եկեղեցւոյ Երգչախումբերուն, ընդհանուր թիւով շուրջ 100 հոգի, հովանաւորութեամբ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ, Գերաշնորհ Նարեկ Արքեպիսկոպոսի, ներկայութեամբ Պատուոյ հիւրեր՝ Սփիւռքի Նախարար Ազնուափայլ Տիկ. Հրանուշ Յակոբեանի, Յունաստանի եւ Կիպրոսի մօտ ՀՀ արտակարգ եւ

լիազօր Դեսպան Վսեմաշուք Տիար Գագիկ Ղալաչեանի, Պետական Ներկայացուցիչ Տէր եւ

Տիկին Վարդգէս Մահտեսեանի, ինչպէս նաեւ եկեղեցին ծայրէ ծայր լեցնող խումներամ բազմութեան մը:

Մթնոլորտը ոգեշնչող էր, տօնական, բոլոր հայ սրտերը իրարու կամարող միասնական ապրումներով օծուն...

Յայտագրի առաջին մասով ելոյթ ունեցան Կրտսերները (5-14 տարեկան), մանկական եւ վաղ պատանեկան զուլալ ու անմեղ ապրումներով հրամցնելով՝ «Տէր Ողորմեա», «Սուրբ Աստուած», «Օրհնեցից զՏէր», «Այսօր Տօն է» եւ «Նոր Տարուան Հանդէս» երգերը որոնք հնչեցին որպէս սրտաբուխ աղօթք առ Աստուած, որպէս օրհներգութիւն՝ նախատօնական այս օրերուն..., ղեկավարութեամբ Տիկ. Վիքի Գույումճեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Նառա Սարտաբեանի:

Յայտագիրը շարունակուեցաւ աւելի փոքր կրտսերներու կատարումով (5-9 տարեկան), որոնք իրենց տարիքին յատուկ խանդավառութեամբ յաջորդաբար երգեցին՝ «Ձիւնը Եկաւ», «Ամանորի Զնգուն Զանգեր», «Նոր Տարին», «Բարով Եկար Նոր Տարի» եւ «Զանգակներ» երգերը, ղեկավարութեամբ Տիկ. Վիքի Գույումճեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Տիկ. Նառա Սարտաբեանի, արժանանալով հանդիսականներու ջերմ ընդունելութեան:

Յայտագրի երկրորդ մասով հանդէս եկան (9-14 տարեկան) կրտսերները, ներկաներուն մատուցելով՝ «Նոր Տարի», «Տի՛նկ Տո՛նկ», «Hark the Herald Angels Sing» եւ «O Come All Ye Faithful» երգերը, ղեկավարութեամբ այս անգամ՝ Տիկ. Նառա Սարտաբեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Երեցկին Թամար Հապէշեանի, նոր շունչ ընծայելով օրուան խորհուրդին:

Յայտագրի վերջըներ մասով, ելոյթ ունեցան Երեցները՝ 40 հոգի, եւ քառաձայն երգեցողութեամբ (Սովորանօ, Ալթօ, Թենոր եւ Պաս) կատարեցին՝ «Տաղ Զրօրհնեաց»,

«Ծնունդի Գիշեր», «Ս. Ծնունդ», «The First Noel», «Իրինի Փսալլուն Ի Կամպանէս» եւ «O Holy Night» երգերը, ղեկավարութեամբ Տիկ. Նառա Սարտաբեանի եւ դաշնակի ընկերակցութեամբ Երեցկին Թամար Հապէշեանի, անթերի ներդաշնակութեամբ եւ բարձր հմտութեամբ:



Հուսկ, հոգեպարար այս տօնական համերգը վերջ գտաւ՝ ամենէն շատ սիրուած եւ

լայն ժողովրդականութեան արժանացած «Լուռ Գիշեր»ով՝ հայերէն, յունարէն եւ անգլերէն, կրտսերներու եւ երեցներու կատարողութեամբ, որուն ընկերակցեցաւ նաեւ՝ Օրդ. Լուսի

Յովհաննէսեանը ջութակի թրթռուն հնչիւններով, Ս. Ծննդեան խորհուրդով եւ խորհրդատրութեամբ համակելով սրտերը....

Իր Օրհնութեան խօսքին մէջ, Գերաշնորհ Տէր Նարեկ Արքեպիսկոպոս արտայայտած եղաւ մեր բոլորին խոհ-ապրումները, երբ ընդգծեց հայ երգին տեղն ու դերը մեր կեանքին մէջ: Ան նշանակալից կերպով փոխ առաւ Սիամանթոյի անմահ տողերը՝ «Ես Երգելով Կ'ուզեմ Մեռնիլ», զայն փոխակերպելով՝ «Մենք երգելով կ'ուզենք ապրիլ»ի խորիմաստ պատգամի: Արդարեւ, Սրբազան Հայրը շեշտեց որ հայ մշակոյթով ապրած ենք դար ու դարեր, հակառակ բոլոր փոթորիկներուն, նոյնիսկ՝ Ցեղասպանութեան: Մշակոյթ՝ որ իր լայն հասկացողութեամբ, կ'ընդգրկէ հայ եկեղեցին, ընտանիքը, դպրոցը, մամուլը, հայ կազմակերպութիւնները, երգը, տաղը, խօսքն ու գիրը..., որոնք անխորտակելի վահանն են մեր ազգային գոյատեւման...: Անդրադարձաւ որ Համերգը մեկնակէտն էր Ցեղասպանութեան 100-րդ Տարելիցին, պատգամելով որ Հայաստան-Սփիւռք կրնան յարատեւել, երբ միասնաբար, իրարմով զօրացած եւ միաւորուած, տէրը կ'ըլլան հայ մշակոյթին, հայ երգին, հայ արժէքներուն եւ, անշուշտ, հայ իրաւունքներուն:

Անմոռանալի Երեկոյ մը՝ արդարեւ, որուն առթած ապրումները, միտք-զգացումները դեռ երկար պիտի ապրին մեր յիշողութեան մէջ, դառնալով նաեւ նորոգ սէր մեր մշակոյթին հանդէպ եւ միաւորման ու միասնականութեան ազդակ՝ հայ երգ ու մշակոյթի շունչով ու ոգիով վարարուն....

ԱԶԱՏ ԽՕՍՔ

Պարգևատրում Տնօրէնուհի Տիկ. Վերա Թահմազեանի եւ Աւագ Արիապետ Պրն. Յարութիւն Անմահունիի

Կիրակի 21 Դեկտեմբեր 2014-ին, կէսօրուան ժամը 12:00-ին, Նիկոսիոյ Առաջնորդարանի դահլիճին մէջ, ի ներկայութեան



Յունաստանի եւ Կիպրոսի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր Դեսպան Տիար Գագիկ Ղալաչեանի, Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Գերաշնորհ Տէր Նարեկ Արքեպիսկոպոսի, Ազգային Իշխանութեան եւ այլ հիւրերու, Սփիւռքի Նախարար Տիկ. Հրանուշ Յակոբեան ՀՀ Նախագահի «ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ»ի շքանշանով պարգևատրեց Նարեկ վարժարաններու Տնօրէնուհի Տիկ.

ՎԵՐԱ ԹԱՀՄԱԶԵԱՆԸ, բարձր արժեւորելով Նարեկ վարժարաններու հայապահպանման եւ հայակերտման առաքելութիւնը Կիպրոսի մէջ:

Այնուհետեւ, Տիկ. Հրանուշ Յակոբեան պարգևատրեց աւագ արիապետ Պրն. Յարութիւն Անմահունիին՝ ՀՀ Պաշտպանութեան Նախարարի «ԴՐԱՍՏԱՄՍՏ



ԿԱՆԱՅԵԱՆ» շքանշանով առ ի գնահատանք անոր ցուցաբերած դրամական եւ բարոյական շարունակական աջակցութեան ՀԱՅՈՅ ԲԱՆԱԿԻՆ:

Հուսկ, Գերաշնորհ Տէր Նարեկ Արքեպիսկոպոս շնորհաւորեց պարգեւատրեալները, բարձր գնահատելով Սփիւռքի Նախարարին տարած աշխատանքը՝ Հայաստան-Սփիւռք կապերու սերտացման գծով: Ան յատկապէս շեշտեց, որ Տիկ. Հրանուշ Յակոբեան մայրական վերաբերմունք կը ցուցաբերէ Սփիւռքի հայագաղութներուն նկատմամբ՝ իր այցելութիւններով, խօսքով, գիրով եւ գործունէութեամբ եւ ընդգծեց Հայաստան-Արցախ-Սփիւռք միասնականութեան հրամայականը, որպէս Յեղասպանութեան 100-ամեայ Տարելիցի կարեւորագոյն իրագործումներէն մին:

Այս ուրախ առիթով, ԱԶԱՏ ԽՕՍԲ-ը ջերմօրէն կը շնորհաւորէ շքանշանակիրները՝ Տիկ. Վերա Թահմազեանը եւ Պրն. Յարութիւն Անմահունին, մաղթելով որ պարգեւատրումը իրենց համար կը դառնայ խթան նորանոր իրագործումներու:

Խմբագրական

ՄԱՐՏԱՀՐԱԲԷՐՆԵՐ ՄԵԾ ԴԱՐԱԴԱՐՁԻ ՍԵՄԻՆ

2015 թուական: Դարադարձը՝ Հայոց Յեղասպանութեան եւ Տարագրութեան մեծ արհաւիրքին: Անկլինադարձային հանգրուան մը՝ որ կը պարտաւորեցնէ մեզ նոր բեկում յառաջ բերելու մեր մտածողութեան մէջ, խնդիրները կամ մարտահրաւերները դիմագրաւելու մեր մօտեցումներուն մէջ, զանոնք լուծելու մեր վճռակամութեան մէջ, որպէս հայոց ազգ ու հայոց երկիր:



Դար մը ամբողջ, հայ քաղաքական միտքը մխրճուած մնաց գերազանցօրէն՝ Յեղասպանութեան ճանաչումը ապահովելու գործընթացին մէջ, մոլորութեան մէջ ձգելով մեր Պահանջատիրութեան Դատը, որ էապէս Հայրենատիրութեան Դատ է: Որքան դիպուկ կը հնչեն այս առնչութեամբ Հայ Դատի մեծ նահատակ եւ մարտնչող մտաւորական Հրանդ Տինքի խօսքերը, բարձրաձայնուած Թուրքիոյ խորհրդարանի ամպիոնէն. « Ժողովուրդը իր արմատէն կտրեցիք, իր չորսհազարամեայ հողէն կտրեցիք, իր մշակոյթէն կտրեցիք: Եթէ նոյնիսկ ոսկեայ օդանաւերով տեղահանած ըլլայիք՝ միեւնոյն է, ատիկա ցեղասպանութիւն է, բռնի տեղահանութիւն է՝ իր հողերէն եւ օճախներէն»:

Հողէն բռնի արմատախիլ կամ Տարագիր ըլլալու փաստն է Հայ Դատի Պահանջատիրութեան հիմնաքարը, նոյնիսկ եթէ Եղեռն տեղի ունեցած չըլլար: Պիտի վերափոխենք հետեւաբար



Ցեղասպանութեան շեշտադրումները, ընդգծելով գերազանցօրէն՝ հողէն արմատախիլ ըլլալու կամ Տարագիր ըլլալու ինքնութիւնը, եւ անկէ բխող գիտակցութիւնը եւ պարտաւորութիւնները, Ցեղասպանութեան ճանաչումը ապահովելու աշխատանքներէն դէպի անոր հետեւանքները վերացնելու կոչուած աշխատանքները: Նշենք նաեւ ու մասնաւորաբար, որ Հայ Դատի վերածումը սոսկ Ցեղասպանութեան ճանաչումի գործընթացին, հաւասարագոր պիտի ըլլար Բաւականանալ համընդհանուր, միջազգային հանրութեան (նոյնիսկ թուրք պետութեան ու ժողովուրդին) բարոյական ցաւակցութեամբ: Ի դէպ, նշենք որ ներկայիս արդէն սկսած է ի գործ դրուիլ նման ցաւակցութիւն յայտնելու թրքական խաբէպատիր ռազմավարութիւնը պետական-հասարակական մակարդակներու վրայ, տակաւ բթացնելու համար Հայ Դատի հողային Պահանջատիրութիւնը...: Անոր գիտակցութեան եւ յանձնառութեան զգոնութիւնը: Պահանջատիրութիւնը ունի մէկ բովանդակութիւն՝ ՀՈՂԸ, բռնագրաւուած Հայաստանը, որմէ տեղահանուած ըլլալու փաստին հետ եւն կապուած, մեծաւ մասամբ, հետեւեալ մարտահրաւերները.-

-Ազգի ամբողջականութեան տրուած մահացու հարուածը: Արդարեւ, Վահան Թէքէեանի դիպուկ բառերով, իր պապենական հողերէն հայրենագուրկ հայութեան բեկորները դարձան «Փռչի Ազգ», ցրուած աշխարհի երեսին, դարձան տարբեր երկիրներու մէջ սփիւռքացած հայագաղութներ: «Սփիւռք» եզրոյթը ինքնին կը յուշէ սփռուածութիւն կամ ցրուածութիւն ի հակադրութիւն «ժողովուրդ» եզրոյթին, որ կը յուշէ ժողովուածութիւն, համախմբուածութիւն: Անհրաժեշտ մարտահրաւեր կը շարունակէ մնալ՝ մեր ցիրուցան ուժերու եւ կարելիութեանց համախմբումն ու խտացումը՝ Մէկ, Լիազօր, Ներկայացուցչական Մարմնի մը ներքոյ, համահայկական մտածողութեամբ ու տեսլականով, կարենալու համար ազգային քաղաքական միասնական ռազմավարութիւն մշակել՝ Հայ Դատի Պահանջատիրութեան գծով եւ ազգային-հաւաքական այլ հիմնախնդիրներու լուծման ուղղութեամբ: Սփիւռքը մեզի պարտադրուած փաստական իրականութիւն է: Ասկէ ելլելով, անհրաժեշտ է զայն այնպէս մը վերակազմակերպել, որ մենք ըլլանք Տէրը անոր քաղաքական ճակատագրին, մենք տնօրինենք զայն համահունչ մեր ազգային նպատակներուն, եւ չթողունք որ ուրիշներ տնօրինեն զայն, ծառայեցնելով իրենց շահերուն: Տարագիր հայութեան նման վերակազմակերպումը հնարաւորութիւն կ'ընձեռէ դառնալու ազգային-քաղաքական ոյժ ու լծակ, դուրս գալու մեր գոհի վիճակէն եւ նուաճելու իր իրաւունքներուն համար մարտնչող Պահանջատիր կարգավիճակ ունեցող կուռ հաւաքականութիւն:

-Մշակութասպանութեան սպառնալիքը, որ դամոկլեան սուրի նման կը մնայ կախուած հայրենահանուած բեկորներուն վրայ, որքան ալ քիչ անգամ խօսինք ու գրենք այդ մասին: Արդարեւ, բռնագրաւուած հայրենի հողը շտեմարանն ու պարունակն էր՝ արեւմտահայութեան լեզուին, բառ ու բանին, երգ ու տաղին, գիր-գրականութեան, մշակոյթին, պատմական յիշողութեան, վարք ու բարքին...: Տարագիր հայը այսօր տակաւ կը կորսնցնէ իր ազգային դիմագիծն ու ինքնութիւնը բնորոշող լեզուն ու մշակոյթը, տակաւ կ'աղօտի հայ հոգին, կը ջլատուի ոգին՝ Սփիւռքի ձուլարաններուն մէջ, ինչպէս նաեւ համաշխարհայնացման յորձանուտին մէջ...եւ ապամշակութաւորման ճահիճին մէջ....



Վերակազմակերպեալ Սփիւռքը վստահաբար կրնայ նոր աւիշ, նոր շունչ, նպատակաւաւացութիւն փոխանցել տարագիր հայութեան հայապահպանման ու հայակերտման ճիգերուն, հայեցի կամ ազգային կրթութեան ի մասնաւորի, անոր հաւաքական ինքնութեան ու ճակատագրին հանդէպ ստանձնելով կազմակերպուած համահայկական պատասխանատուութիւն: Պիտի ուզէի յատկապէս շեշտել ազգային կրթութեան խիստ էական անհրաժեշտութիւնը, որ միտուած ըլլայ պատրաստելու վաղուան գիտակից, յանձնառու, գիտական, հոգեմտաւոր բարձր որակի տէր հայ մարդուժը, որ մեծագոյն երաշխիքն է հայ Դատի արդար լուծման, ինչպէս նաեւ՝ ազգի յառաջդիմութեան ու հզօրացման:

-Խօսելով մեր դիմագրաւելիք մարտահրաւերներուն մասին, չենք կրնար մտահան ընել մեր Հանրապետութեան վերակազմակերպումի հիմնախնդիրը, որ նոյնպէս էական, նոյնիսկ առաջնահերթ մարտահրաւեր է, երբ արտագաղթը դարձեր է անարին եղեռն, որ կը սպառնայ հայաթափել մեր երկիրը, ինչ որ մահացու հարուած կրնայ ըլլալ ընդհանրապէս հայութեան լինելութեան: «Օղի, ջուրի, հացի նման» կենսական ու ճակատագրական է ներկայիս մշակել ու ցուցաբերել պետական մտածողութիւն, պետական գործելակերպ բոլոր մակարդակներու վրայ ալ՝ յաղթահարելու համար ՀՀ իշխանութիւն-հասարակութիւն անջրպետը, օլիգարխիկ համակարգի անարդարութիւնները, անօրինականութիւնները, հարբելու համար ընկերային բեւեռացման սրութիւնը, թումբ կանգնելու ապամշակութացման հոսանքին, բարձրացնելու հայրենի հանրութեան բարոյա-հոգեբանական մթնոլորտը... Պետական մտածելակերպ ի մասնաւորի ՀՀ իշխանութեանց մօտ՝ վարելու համար էապէս ազգային, հայրենասիրական եւ ժողովրդանուէր քաղաքականութիւն, ինչ որ վստահաբար կրնայ արտագաղթի կասեցման եւ հայրենադարձման հզօրագոյն ազդակ դառնալ:

Ներկայ աշխարհաքաղաքական ծանր պայմաններուն ներքոյ, երբ հայրենամերձ, հայաշունչ հայագաղութներ կը դիմագրաւեն ճգնաժամային իրավիճակներ, երբեմն նոյնիսկ լինել-չլինելու սպառնալիքը, ինչպէս ատիկա տեսանք Քեսապի, Հալէպի, Իրաքի մէջ, թէ այլուր, երբ նոր օսմանիզմը կը զարթնու իր աւելի կատարելագործուած հայաջինջ եւ լկտի քաղաքականութեամբ, Տարագիր հայութեան վերակազմակերպումը՝ Մէկ, Լիազօր, Ներկայացուցչական Մարմնի մը ներքոյ, կրնայ ուղեցոյց փարոս եւ փրկութեան լաստ դառնալ՝ ուղեկորոյս, ահախուճապ բազմութեանց, դառնալ կեդրոնախոյս ուժերը հունաւորող հզօր ազդակ, ինչպէս նաեւ քաղաքական-դիւանագիտական ազդու լծակ...:

Միշտ ալ ըսած ու յանկերգի նման կրկնած ենք, որ մեր ազգային փրկութիւնը մեր հաւաքական ոյժին մէջ է, բայց խօսքի սահմանէն անդին, չենք կրցած ցարդ կեանքի կոչել այս դարաւոր պատգամը:

Հայոց Յեղասպանութեան եւ Հայրենահանման 100-րդ տարելիցին, ազգային մեր կեանքին մէջ յառաջընթաց եւ շրջադարձային քայլ մը առած կ'ըլլանք որոշապէս, եթէ իրականացնենք Սփիւռքի քաղաքական վերակազմակերպումը՝ մեր Հանրապետութեան վերակազմակերպումին հետ զուգահեռ, կարելի դարձնելով նաեւ՝ «մրրկաւ զատուած», հայութեան երկու հատուածներու՝ Հայաստանի եւ Սփիւռքի սերտ եւ արդիւնաւէտ

համագործակցութիւնը, քանզի կուտ կազմակերպուած սփիւռքը միայն կրնայ հզօրացման ազդու եւ երկարաժամկետ ազդակ դառնալ Հայաստանի եւ՝ փոխադարձաբար: Եւ վերջապէս, յոյսի եւ լոյսի նոր հեռանկար ստեղծել՝ Ազգահաւաքի եւ Հողահաւաքի մեր Մեծ Երագին իրականացման....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Հարցազրոյց

Պատմաբան Փրոֆ. Սեպուհ Ասլանեանի հետ Հարցազրոյցը վարած է ՆՈՐ ՅԱՌԱՋ-ի խմբագիր Ժիրայր Զոլաքեան

«Նոր Զուղայեցիները ստիպուած եղան իրենք զիրենք վերստին կազմակերպելու ոչ որպէս առեւտրական համայնք, այլ՝ արդի ազգի մը կորիզը» Պատմաբան Փրոֆ. Սեպուհ Ասլանեան



Գալիֆորնիոյ ԵՈՒՍԻ.ԷԼ.Էյ համալսարանի հայագիտական ամպիոնի վարիչն է (փոխարինած է Փրոֆ. Ռիչըրտ Յովհաննէսեանը): Ան գլխաւոր բանախօսն էր եւ գլխաւոր գիտական խորհրդատուն Կիւլպէնկեան հաստատութեան կողմէ Հոկտեմբեր 16-17-ին Լիզպոնի մէջ կազմակերպուած Հայոց, Փորթուկալցիներու, Հրեաներու եւ Մահմետականներու առեւտրական յարաբերութիւններուն եւ անոնց միջեւ գոյութիւն

ունեցած ցանցերուն մասին գիտաժողովին:

Նկատի առնելով Փրոֆ. Ասլանեանի գիտական վաստակը հայագիտական ուսումնասիրութիւններուն մէջ, իր հետ հանդիպում ունեցանք այս մարզէն ներս իր տարած հետազօտական աշխատանքին մօտէն ծանօթանալու համար:

Հարցում - Լիզպոնի համագումարին ընթացքին արծարծուեցան մետաքսի ճամբուն եւ ընդհանրապէս միջազգային առեւտրի մարզին մէջ հայ վաճառականներու կարեւոր դերակատարութեան երեւոյթները: Հայ առեւտրականները այն ժամանակ ո՞ր կը ստանային իրենց կրթութիւնը:

Պատասխան- Շատ հետաքրքրական հարցում մըն է: Ըսեմ, որ տակաւին նոր սկսած է այս հարցը լրջօրէն արծարծուիլ կամ ուսումնասիրուիլ: Վաճառականները ընդհանրապէս ուսում ստանալու քանի մը միջոցներ ունէին տասնօթերորդ դարուն: Անոնք Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքին շրջափակին մէջ իրենց համաշխարհային ցանցի գեր-կեդրոնը ունէին վաճառականական կաճառ մը, ուր այդ ճիւղին վերաբերեալ ուսման դասընթացքները կը վարէր Կոստանդ Զուղայեցի անունով վարպետ մը: Ան հաւանաբար իր ձեռքին տակ ունէր իրմէ առաջ նախկին վաճառականներուն բազմաթիւ կրկնատոմարները: Վաճառականները այն ատեն տարիներով (երբեմն 10-20 տարի կամ նոյնիսկ աւելի) կը շրջագայէին եւ վերադարձին իրենց ունեցած շահին մէկ քառորդը կը պահէին, իսկ մնացեալ



առիւծի բաժինը կը յանձնէին ոչ-շրջուն եւ մնայուն տեղ գրաւող դրամատէր խոճաներուն: Շրջող վաճառականները այդ կրկնատոմարներուն մէջ մանրամասնօրէն կը նկարագրէին իրենց ճանապարհորդութիւնը, ծախած ապրանքները, եւայլն: Հաւանաբար Կոստանդ Ջուղայեցին այդ տեղեկութիւններէն օգտուելով կրցած էր կարելոր դասագիրքի նման ձեռագիր մը կազմել, որ այսօր մեզի հասած է քանի մը օրինակներով: Այս պարագան սակայն ուսումնասիրութեան կը կարօտի, որովհետեւ մենք տակաւին պրպտումներու առաջին հանգրուանին կը գտնուինք:

Բացի այդ, ջուղայեցիները ունէին ուսում ստանալու այլ կարելոր միջոց մը. եւրոպացի կաթողիկէ առաքելականները, որոնք հաստատուած էին Նոր Ջուղայի մէջ եւ կրօնքի ազատութիւն ու վաճառականութեամբ զբաղելու իրաւունք ունէին, հիմնած էին ոչ-պաշտօնական դպրոցներ, ուր կը յաճախէին վաճառական Հայերու զաւակները՝ եւրոպական լեզուները սերտելու համար: Անոնք եթէ Հնդկական ովկէանոսի մէջ պիտի աշխատէին՝ փորթուկալերէն կը սորվէին եւ այս ընթացքը շարունակուած է մինչեւ 1700ականներու վերջերը (հակառակ Անգլիացիներու տիրապետութեան հոլովոյթին): Բայց եթէ այդ նոյն Հայերը Միջերկրականի բեմին վրայ պիտի աշխատէին՝ իտալերէնը կ'ուսումնասիրէին, որ «լինկուաֆրանքայի» առաջին հանգրուանն էր, այլ խօսքով անոնք իտալերէնի միջոցով ընդհանրապէս ֆրանսերէն կը սորվէին, բայց նաեւ սպաներէն լեզուն կը սերտէին: Ուսեալ այդ շրջուն վաճառականները արտադրած էին տարբեր լեզուներով բազմաթիւ թարգմանութիւններ, որոնք տակաւին կ'ուսումնասիրուին: Անոնք մեզի ձգած են մեծ ժառանգութիւն մը որ բաւականաչափ չէ հետազօտուած:

Հարցում- Ի՞նչ կը ներկայացնէին խոճաները:

Պատասխան - Կրնամ ըսել թէ խոճաներու դասակարգը ոչ միայն շատ յառաջադէմ էր առեւտրական ճիւղին մէջ, բայց նաեւ հոյակապ դերակատարութիւն ունեցած է մշակութային մարզի զարգացման առումով եւ ասիկա տակաւին վաղ-արդի շրջանին, այսինքն 1500-1800 տարիներու ընթացքին: Այն ատեն Հայոց պատմութեան մէջ բառացիօրէն տեղաշարժ մը տեղի ունեցաւ, իսկ մշակութային դաշտին մէջ հայկական լեռնաշխարհը դադրեցաւ կեդրոն ըլլալէ՝ մերթ ընդ մերթ տեղաւորուելով ծովերուն եւ ովկէանոսներուն եզերքը գտնուող նաւահանգստային քաղաքներուն մէջ, ինչպէս՝ Մատրաս, Կալկաթա, Մուրաթ, Ամսթերտամ, Մարսիլիա, Վենետիկ, Պոլիս եւ Զմիռնիա: Այս վայրերուն մէջ երեք հարիւր տարւան ընթացքին գոյացաւ նոր դասակարգ մը եւ կրնանք ըսել թէ ձեւով մը՝ Հայո նոր տեսակ մը կերտուեցաւ, որ կը կոչուէր նաւահանգստային կամ ծովային Հայ, զանազանելու համար ցամաքային Հայերէն, որոնք աւելի շատ հողին վրայ կեդրոնացած էին:

Այդ նոյն նաւահանգստային Հայերն էին որոնք մշակութային հսկայական աշխատանք տարած են՝ հաստատած են տպագրութեան կեդրոններ, կատարած են թարգմանութիւններ, բացած են դպրոցներ, ինչպէս Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանը կամ Կալկաթայի Մարդա-սիրական ճեմարանը:



Հարցում - Յետագային սակայն այս կրթական շարժումը իր դրական հետեւանքը ունեցաւ նաեւ այլուր եւ յանգեցաւ Էջմիածնի, Մոսկուայի եւ Թիֆլիսի մէջ յաջորդաբար «Գեորգեան», «Լազարեան» ճեմարաններուն եւ «Ներսիսեան» վարժարանին հիմնադրութեան...:

Պատասխան - Անշուշտ չեմ անտեսեր այդ կրթական կեդրոններուն կարեւորութիւնը, բայց կենթադրեմ, թէ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեանը եւ Կալկաթայի Մարգարիտական ճեմարանը աւելի կարեւոր դերակատարութիւն ունեցած են սերունդներու դաստիարակութեան գործին մէջ: Յամենայն դէպս, ամփոփելով քիչ առաջ ըսածներս, կրնամ ըսել թէ այդ շրջանը ունեցաւ իր երկու յատկութիւնները, որոնք Հայոց պատմութեան նկարագիրը դրոշմած են: Առաջին՝ ծովափնեայ եւ նաւահանգստային կեդրոններու կարեւորութիւնն է, իսկ երկրորդ յատկանիշը այն է որ վաճառականները, կղերականներու ընտրանի դասակարգը եւ տպագրիչները անդադար շրջած ու ծովային ճամբորդութիւններ ունեցած են եւ իրենց գործունէութեամբ, նաեւ փորձառութեանց հաւաքագրումով կեդրոնական դեր խաղացած են ո՛չ միայն Հայերու այլեւ ամբողջ աշխարհի պատմութեան մէջ:

Հարցում - Ճամբորդող վաճառականներու ընտանիքը ի՞նչ թիւ կը կազմէր:

Պատասխան - Ըստ Յարութիւն Տէր Յովհաննէանցի «Պատմութիւն Նոր Զուղայի՝ ի Սպահան» երկհատորեայ երկին (1850ին գրուած եւ 1880ին հրատարակուած) մէջ բերուած վկայութիւններուն՝ մեծահարուստ վաճառական ընտանիքներու թիւը 20էն 30ի շուրջ էր: Պէտք է ըսել թէ Նոր Զուղայի բնակչութեան թիւը միշտ ալ փոքր եղած է եւ տարբեր շրջաններուն 30 հազարը չէ անցած: Իսկ այդ նոյն փոքրաթիւ համայնքը իր հսկայական ազդեցութիւնը եւ հետքը ձգած է մեր այսօրուան պատմութեան եւ կեանքին վրայ:

Հարցում - Վաճառական այդ երեսուն ընտանիքները իրենց առեւտրական աշխատանքին քով որքանո՞վ նպաստած են տարբեր երկիրներու համայնքներու զարգացման գործին եւ ի՞նչ ներդրում ունեցած են մշակութային կեդրոններուն մէջ:

Պատասխան - Անոնք շատ կարեւորութիւն կու տային մեկենասութեան եւ բարերար աշխատանքին: Առանց անոնց դրամագլուխին ուսումնական կեդրոնները չէին կրնար կանգուն մնալ եւ մանաւա՛նդ գիրքեր չէին տպագրուէր: Ընդհանրապէս իւրաքանչիւր համայնք նման դասակարգի մը կարիքը ունի, որ թէ՛ նիւթական ներդրում կատարէ եւ թէ այդ դրամագլուխը ճիշդ ձեւով օգտագործէ: Կարեւորը ո՛չ թէ դրամ ունենալն է այդ դրամը ճիշդ ձեւով գործածելը:

Հարցում - Կարեւոր է գիտնալ թէ այդ անձերը հայկական հողին վրայ ինչպիսի՞ գործունէութիւն ծաւալած են կամ ի՞նչ ձեւով ազդած են ազգային գիտակցութեան վրայ:

Պատասխան - Քիչ առաջ նշեցի Մուրատ-Ռափայէլեան վարժարանի օրինակը, որ մեզի համար Օքսֆորտի կամ Քէմպրիճի կարեւորութիւնը ունէր տասնիններորդ դարուն, եթէ ոչ աւելի ուշ ալ: Վարժարանը հիմնուած է Էտուարտ Ռափայէլ Ղարամեանցի եւ իր փեսայի՝ Սամուէլ Մուրատեանի միջոցաւ, որոնք երկուքն ալ հարստութիւն դիզած են Զինաստանի մէջ եւ առեւտրական շահերէ գոյացած այդ գումարը յատկացուցած են Մխիթարեան



Միաբանութեան, որպէսզի Եւրոպայի հողին վրայ ունենան կրթական կեդրոն: Անոնք նախապայման դրած էին որ վարժարանը պիտի ծառայէ որք եւ դրամական միջոցներէ գուրկ հայ երիտասարդ սերունդին՝ առանց դաւանանքի խտրութեան: Այդ երիտասարդութիւնը կու գար Հայաստանէն կամ այն օրերուն Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ գտնուող շրջաններէն:

Կալկաթայի Մարդասիրական ճեմարանն ալ ջուղայեցի վաճառական մը հիմնած է: Նոյնը կարելի է ըսել նաեւ «Լազարեան»ի մասին: Գիտէք կարելորդ ոչ թէ քանակը այլ որակը եղած է, այսինքն անոնք կերտած են թիւով քիչ, սակայն որակաւոր կրթօճախներ:

Հարցում - Այդ ընտանիքները -ինչպէս ըսուեցաւ համագումարի ընթացքին- երեք-չորս սերունդէ անդին չեն կրցած իրենց ժառանգութիւնը փոխանցել...

Պատասխան - Մեր պատմութեան մէջ միշտ ալ հանդիպած ենք նման խոչընդոտներու եւ մնայուն ու շարունակական խողովակներ չենք ունեցած մեր աւանդութիւնը, կրթութիւնը կամ դրամագլուխը ապագայ սերունդներուն փոխանցելու առումով եւ պատճառն ալ այն է որ համայնքային համապատասխան կառոյցներ եւ հիմնարկութիւններ (institutions) չենք ունեցած: Այս մէկը ուսումնասիրութեան կարօտող այլ նիւթ մըն է: Մեզի միշտ ալ պակսած են հաղորդակցութեան միջոցները:

Հարցում - Այսօր, անցեալի այդ երեւոյթներէն ի՞նչ ուսանելի դասեր կարելի է քաղել:

Պատասխան - Ինչպէս ըսի, այս մարզին մէջ ունեցած ենք հարուստ անցեալ մը, մանաւանդ ինչ կը վերաբերի Նոր Զուղայի պարսկահայ վաճառականներուն, որոնք կարելի է ըսել համաշխարհային բազմամշակութային համայնք մը եղած են եւ երբեք չեն գոհացած միա՛յն ջուղայեցի կամ միա՛յն Հայ ըլլալով: Անոնք իւրաքանչիւր մշակոյթի կարելորդ եւ ընտրանի յատկութիւնը քաղած են ապագային նոյնը որդեգրելով իրենց կեանքին ընթացքին:

Ես միշտ ընդգծած եմ, թէ 21րդ դարուն յաջողելու համար հարկ է նախ բազմակեզուանի ըլլալ եւ բաց՝ աշխարհին հանդէպ, պէտք է բաց միտք ունենալ ի տես՝ մշակոյթներու տարբերութեան, որպէսզի կարելի ըլլայ գործնական ձեւով որդեգրել լաւագոյն բաժինները եւ անոնց միջոցաւ կերտել նոր ինքնութիւն մը, որ կրնայ «հարստացնել» անձը:

Հարցում - Արդեօ՞ք պէտք է դուրստել Շահ Աբբասը, որ բռնի կերպով եւ տեղահանութեամբ Պարսկաստան փոխադրեց շուրջ 400 հազար Հայեր:

Պատասխան - Ես այդպէս չեի ըսեր: Չմոռնանք, որ Շահ Աբբասն ալ իր նմաններուն պէս բռնակալ թագաւոր մըն էր: Այս պարագային այդ արարքը լաւ հետեւանքներ ունեցած է, հակառակ ջուղայեցիներու կրած չարչարանքներուն: Կենթադրեմ, թէ մեր պատմութեան մէջ պէտք է տեղ մը յատկացնել պարսկական սէֆէվեաններու օժանդակութեան, որոնց շնորհիւ նոր ջուղայեցիները միջազգային յաջողութեան տիրացած են: Հարկ է նշել, թէ նոր ջուղայեցիներու եւ սէֆէվեաններու միջեւ վստահութեան եւ ներդրումի փոխադարձ յարաբերութիւն մը գոյութիւն ունէր:



Հարցում - Հայ առեւտրականութիւնը եթէ վերացաւ պատճառը նաեւ այն էր որ ձեր նշած այդ նաւահանգստային ճամբաները գրաւուեցան եւ անոնց գործածութիւնը արգիլուեցաւ հայ վաճառականներուն: Ասիկա այլ պետութիւններէն կախեալ ըլլալու հարց մըն էր: Այս երեւոյթը ինչպէ՞ս կը բացատրէք:

Պատասխան - Նախքան այդ, 1747-48 թուականներուն արդէն ջուղայեցիներուն համար յստակ էր որ իրենց ցանցը լուծուած է, թէ իրենց կեդրոնը դարձած է վայրենի այլ բռնակալի մը թի-րախը, յանձինս Նադիր Շահին, որ փոխարինեց սէֆէվեանները: Ան կործանեց Նոր Ջուղան եւ Սպահանը, պատճառ դառնալով տեղացիներուն թափառականութեան: Անկէ ետք շուրջ 20 տարուան ընթացքին առեւտրական ցանցը հետզհետէ ոչնչացաւ եւ հայ վաճառականները մեծ կորուստներ կրեցին եւրոպական զանազան Արեւելեան Հնդկաստանի ընկերութիւններէ (East India Companies) մանաւանդ անգլիական ընկերութենէն, որ գաղութատիրութեան ճամբան բռնած էր եւ տասնութերորդ դարու վերջին քառորդին տէրն ու տիրականը դարձաւ Հնդկաստանի: Չմոռանանք որ այս ընկերութիւնները ոչ միայն աշխարհի առաջին «Joint stock corporation»-ն էին այլ հզօր եւ կեդրոնացած պետութիւններու օժանդակութիւնը կը վայելէին: Այս երեւոյթը եւ իրականութիւնը բաւական ծանօթ էին մեր ջուղայեցիներուն ինչպէս Արեւելքի միւս բոլոր համայնքներուն, որոնք ականատես էին Եւրոպացիներու «յաջողութիւններուն», թէ՛ առեւտրական թէ՛ ալ ռազմական եւ քաղաքական (գաղութատիրական) դաշտէն ներս: Դատելով եւրոպական ընկերութիւններու այս յաջողութիւնները կարելի է ըսել, որ ջուղայեցիները յանգեցան այն եզրակացութեան, թէ 1700ական թուականներու վերջաւորութեան յաջողութեան միակ միջոցը՝ կեդրոնացած պետութիւն մը ունենալն էր, որ կ'օժանդակէր անգլիական բազմազգեան (multinational) գործակցութեան:

Ջուղայեցիները առ այդ ստիպուած եղան իրենք զիրենք վերստին կազմակերպելու, այս անգամ ոչ որպէս առեւտրական համայնք, այլ իբրեւ արդի ազգի մը կորիզը եւ ատոր համար ալ սկսան հրատարակել սահմանադրական գրութիւններ: Այս գծով կարելի է Մատրասի մէջ Շա-համիր Շահամիրեանի փայլուն օրինակը բերել:

Հարցում - Կարելի՞ էր երկու խօսքով ամփոփել «Որոգայթ Փառաց»ը:

Պատասխան - Սահմանադրական առաջին գրութիւններէն մէկն էր «Որոգայթ Փառաց»ը, որ համաշխարհային տարբեր հոսանքներու ազդեցութեան արգասիքն էր եւ «ծնունդ առաւ» Անգլիացիներուն գաղութը համարուող Մատրասի մէջ: Այնտեղէն ծովային ճամբով նորանոր գաղափարները կը հասնէին Եւրոպա եւ Ամերիկա: Կարելի է «Որոգայթ Փառաց»ը նկատել որպէս Հնդկաստանի մէջ լսուած կամ զգացուած Ամերիկեան յեղափոխութեան եւ սահմանադրութեան գաղափարին եւ մանաւանդ ամերիկեան անկախութեան հռչակագրին առաջին արձագանգներէն մէկը:

«Որոգայթ փառաց»

«Որոգայթ փառաց»ը 18րդ դարու երկրորդ կէսի հայ քաղքենի լուսաւորական մտքի եւ յառաջդիմական գաղափարներու արժէքաւոր վաւերագիր է: Վերահրատարակուած է 1913ին, Թիֆլիսի մէջ: Շարադրուած է Շահամիր Շահամիրեանի կողմէ արեւմտաեւրոպական



լուսաւորական գաղափարներու ազդեցութեամբ: Հրատարակուած է Մատրասի մէջ, Շ. Շահամիրեանի գաւկիին՝ Յակոբի կողմէ, «Որոգայթ Փառաց»ի տիտղոսաթերթը անունով, 1788-1789 թուականներուն:

Ընդարձակ յառաջաբանին մէջ կը դատապարտուին աւատապետական-միապետական կարգերը, կը պատճառաբանուին թրքա-պարսկական բռնակալութենէն Հայաստանի ազատագրման անհրաժեշտութիւնը եւ քաղքենի-ժողորդավարական կարգերու հաստատման սկզբունքները: Գիրքին երկրորդ՝ եւ բուն մասը սահմանադրութեան նախագիծն է, ուր ներկայացուած են ապագայ անկախ Հայաստանի հանրային-պետական կառոյցը, կառավարման մարմիններու ստեղծման կարգը, անոնց իրաւասութիւնները, քաղաքացիներու իրաւունքները եւ պարտաւորութիւնները, տնտեսութեան, լուսաւորութեան, բանակի կազմակերպման հարցերը եւայլն: Ապագայ հանրապետութեան բոլոր քաղաքացիները օրէնքին առջեւ հաւասար կը հռչակուէին, կը վերցուէին դասակարգային աստիճանաւորումները: Անոնք կ'ունենային խօսքի, դաւանանքի, անձի եւ գործունէութեան ամբողջական ազատութիւն: Սակայն բոլոր պաշտօնները կը վարէին լուսաւորչական Հայերը: Հողի սեփականատէր կրնային դառնալ վերջիններս, մինչ այլադաւանները եւ այլազգիները կ'ունենային միայն հողի վարձակալման իրաւունք: Ընտրուելու իրաւունքը կը սահմանափակուէր սոսկ բարոյական յատկանիշներով: Երեսփոխանները կ'ընտրուէին 3 տարուան համար: Կառավարման մարմինները կ'ընտրուէին երեսփոխաններէն: Գերագոյն եւ օրէնսդիր իշխանութիւնը կը ստանձնէր Հայոց Տունը՝ Խորհրդարանը, մինչ՝ Նախարարական խորհուրդը՝ գործադիր իշխանութիւնը: Հայոց Տունը կ'ունենար իր նախագահութիւնը՝ կազմուած 14 տանտէրերէ: Նախարարութիւնը կը բաղկանար նախարարէ մը եւ 12 տեղակալներէ: Նախարարը կը համարուէր նաեւ երկրի Արտաքին գործերու նախարարը եւ զինուած ուժերու գերագոյն հրամանատարը: Հայոց տունը կը հսկէր նախարարութեան գործունէութեան եւ իրաւունք կ'ունենար փոխելու օրինախախտ կառավարութիւնը: Քաղաքական նկատառումով, նախագիծին մէջ կ'առաջարկուէր նախարար ընտրելու այլ՝ բացառիկ տարբերակ մը եւս, հին հայկական արքայատոհմերու, յատկապէս Բագրատունիներու շառաւիղներէն մէկը իր ցանկութեամբ կրնար ընտրուիլ ցկեանս նախարար, եթէ հաւատարիմ ու հնազանդ մնար Հայոց Տան սահմանած օրէնքներուն: Այդ բացառութեան նպատակն էր՝ շահագրգռել Վրաց Բագրատունի թագաւոր Հերաքլը Բ-ը, որուն Մատրասի խմբակը կարելոր դեր կը վերագրէր Հայաստանի ազատագրման գործին մէջ: Նախագիծին մէջ նախատեսուած էր կառավարման այլ մարմիններու, դատարաններու կազմակերպման կարգը, անոնց կառոյցը եւ իրաւասութիւնները: Կը հիմնուէին (ընտրութեամբ) մայր կամ բարձրագոյն դատարան, տեղամասերուն մէջ՝ մնայուն, ոճրային գործերու համար երդուեալներու դատարաններ: Դատավարութիւնները կ'ընթանային գրաւոր, մեղադրեալը կրնար ունենալ փաստաբան: Կան նաեւ բազմաթիւ յօդուածներ նուիրուած լուսաւորութեան, տնտեսութեան զարգացման հարցերուն, ընտանեկան յարաբերութիւններուն եւայլն: Եկեղեցին կը բաժնուէր պետութենէն, դպրոցը՝ եկեղեցիէն: Կրթութիւնը բոլոր քաղաքացիներու համար կը դառնար պարտադիր, առանց սեռի տարբերութեան: Կարօտեալներու, որբերու կրթութիւնը եւ բժշկութիւնը կը հոգար պետութիւնը: Հանրապետութեան գլխաւոր նեցուկը կը նկատուէր մնայուն բանակը

(90 հազար զինուոր), որ կ'ամբողջացուէր վիճակահանութեամբ (իւրաքանչիւր 100 այրէ՝ 5ը, ուսման, ծառայութեան եւ պատերազմի՝ 7 տարուան շրջանի մը համար):

Աղբիւր՝ ՆՈՐ ՅԱՌԱՋ

Յօդուածներ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԻ ԱՌԻԹՈՎ Այս յօդուածը կ'արտատպենք՝ վերջերս լոյսին ընծայուած,

ՄԿՐՏԻՉ ՅԱԿՈԲ ՊՈԼՏՈՒՔԵԱՆԻ հեղինակած՝ «ՈՒՆՁՔԸ» գիրքէն:

Հայաստանեայց եկեղեցին եղած է հայ ժողովուրդին հաւատքի եւ դարաւոր գոյատեւման գլխաւոր ամրոցը, մեզի փոխանցելով հոգեւոր գրականութիւն, երգեցողութիւն, շարականներ ու ճարտարապետութիւն: Սակայն, ներկայ դարուս, հայուն մարտահրաւերները, ինչպէս արմատախիլ եղած ժողովուրդի ապրելակերպը, նիւթապաշտութիւնը եւ մասամբ նորին, հայ անհատին պահանջները, հայ երիտասարդին ուսման ձեռքբերումը եւ մեր շրջապատը, ստեղծած են այնպիսի պայմաններ, որոնք տկարացուցած են դարաւոր այդ գանձերուն օգտագործումը սփիւռքի մէջ:



Հայաստանի տարածքին ու անոր շուրջը բնակող հայորդիներուն համար, մարտահրաւերները կրնան աւելի հեշտ ըլլալ, կամ չունին անոնք սփիւռքի աշխարհատարածքի ժխտական պայմանները: Հոն աւելի դիւրաւ տ պայմաններու մէջ կ'ապրին ու հոգեւոր մշակոյթը կարող են օգտագործել եւ գործադրել: Հայութեան համար, սփիւռքի գաղթօճախները մեկական ծփուն հայրենիքներ են: Սփիւռքի մէջ կան բազմաթիւ կրօնական տաճարներ ու հոգեւոր խարիսխներ, ինչպէս Կ. Պոլսոյ եւ Երուսաղէմի պատրիարքութիւններն ու Անթիլիասի ամենայն հայոց Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Անշուշտ գոյութիւն ունի նաեւ այլ հայ յարանուանութեանց կեդրոններ Լիբանանի մէջ, Վենետիկ եւ Վիեննա: Այս կեդրոնները իրենց կարելին կ'ընեն, աննպաստ նիւթական եւ քաղաքական պայմաններու տակ, որպէսզի ժողովուրդը օգտուի այս դարաւոր գանձերէն: Այլ ազգերու բաղդատմամբ, որքան հայութիւնը կառչի այս հոգեւոր գրական արժէքներուն, այնքան դիւրին կ'ըլլայ հայուն յաւիտենականութիւնը երկրագունդին վրայ՝ այլասիրութեան ուշացումը այս ծփուն աշխարհատարածքներուն վրայ:

Մեր եկեղեցիները յաճախելը եւ հաւատացեալներուն ներկայութիւնը պակսած են զգալիօրէն ոչ միայն լիբանանահայութեան մօտ, այլ շրջանի բոլոր երկիրներուն մէջ, ուրկից հայութիւնը գաղթած է դէպի արեւմուտք: Վերջերս եղած եմ Պաղտատ, ուր յաճախեցի Սուրբ



Գրիգոր Լուսաւորիչ տաճարը՝ Վարազայ Խաչի տօնին: Իրաքահայութիւնը կը պահէ 9 եկեղեցիներ զանազան քաղաքներու մէջ, որոնցմէ 4-ը Պաղտատի մէջ: Պատճառը յայտնի է բոլոր քրիստոնէաներուն համար Տիգրիսի այս երկրին մէջ: Սակայն գիտցէք մէկ բան: Երբ քու դիմացինիդ ցոյց կու տաս որ տկար ես ու կը վախնաս, զայն կը զօրացնես, իսկ երբ դուն ցոյց կու տաս քու քաջութիւնդ, անվախութիւնդ ու կտրիճութիւնդ, քու դիմացինդ կը չեզոքացնես: Յուսանք Հայաստանի նոր դեսպան Մուրատ Մուրատեանը իր շուքը կը տարածէ ի նպաստ՝ Իրաքի հայութեան:

Գալով լիբանանահայութեան, ճիշդ է որ հայութեան թիւը նուազած է, այդ պատճառաւ հաւատացեալներուն ներկայութիւնն ալ նօսրացած կը սեպուի մեր եկեղեցիներուն մէջ: Եթէ հոգեհանգստեան պաշտօն չըլլայ, աւելի նօսր կրնայ ըլլալ եկեղեցի յաճախողներուն թիւը: Սակայն, վայրկեան մը. իմ կարծիքով, մեր հաւատացեալները դարձած են անհաւատ, ու այդ պատճառաւ կուտակած են բազմաթիւ թշուառութիւններ: Իսկական հաւատացեալ մը՝ եթէ շաբաթը անգամ մը գոնէ եկեղեցի յաճախէ, եթէ հաւատացեալ մը, գոնէ շաբաթը անգամ մը Աստուծոյ տան սեմէն ներս մտնէ, երբ հաւատացեալ մը աղօթէ ու Աստուծմէ խնդրէ իր փափաքածը, անպայման կը ստանայ: Աղօթելով, շարականները երգելով ու լսելով, մարդուս մտքին մէջ կը մաքրուին մարմնական ու հոգեկան խռովքն ու մտահոգութիւնները: Հաւատքը կը զօրացնէ անձը, ու այս խրթին կեանքին լուծումներուն դուռ կը բանայ:

Եկեղեցւոյ ներկայացուցիչներուն ու հաւատացեալներուն միջեւ պէտք չէ բաց մը գոյանայ: Հոգեւորականներ աւելի ու աւելի ժամանակ կարող են տրամադրել այցելելով իրենց ծուխերը, ինչպէս Օսմանեան Կայսրութեանմէջ, մեր քահանաները կը կատարէին իրենց այդ պարտականութիւնը գաւառներուն մէջ: Եթէ 600 տարի Օսմանեան լուծին տակ՝ հայը հայ մնաց, այդ կը պարտինք գլխաւորաբար մեր հոգեւորական դասին զանազան կարգերուն: Երբ երիտասարդ մը կը մտնէ հոգեւորական կեանքը, կ'ապահովէ մինչեւ իր կեանքին վերջը անհատական որոշ առաւելութիւններ ու իր ապրուստը: Չի մտածեր թէ յաջորդ օրը գործ ունի՞, թէ գործագուրկ պիտի մնա՞յ: Ատոր փոխարէն, իր պաշտօնին բերումով, ան ունի պարտականութիւններ, որոնցմէ գլխաւորը պէտք է ըլլայ՝ մօտէն հետաքրքրուիլ եւ հաղորդակցիլ օճախներու հետ, ջանք թափել, քաջալերել ու զօրացնել հայ հաւատացեալին հաւատքը:

Ըլլայ դասական սփիւռքի մէջ, Հայաստանի հողատարածքին, կամ Սովետ նախկին հանրապետութիւններու մէջ ծլած ու բնակող սփիւռքահայութեան մէջ՝ 21-րդ դարուն, եկեղեցիին դերը, դիրքն ու աշխատանքը պէտք է բազմապատկուին, բաժնեկից դառնալով հայ ժողովուրդի կեանքին, անոր իղձերուն, երագներուն, պայքարին ու դատին իրականացման: Գործօն ըլլալ կը նշանակէ՝ աշխատանք տանիլ, ըլլալ քաջալերող, արթուն, նախատեսող ու ձեռներէց: Փոխարէնը՝ ժողովուրդը թող իր քսակը լայն բանայ նպաստելու համար հոգեւորականներուն ու եկեղեցիի պիւտճէին: Հաւատացեալը չեմ կարծեր որ խուսափի մեր եկեղեցականներէն:

Եթէ չմնացին թագաւոր եւ թագաւորութիւն, չմնացին մեր 3000-ամեայ նախարարները, քաղաքներն ու գաւառները, մնացին Հայաստանեայց եկեղեցւոյ ներկայացուցիչները ու Հայաստանեայց եկեղեցին՝ բոլոր ծանր պայմաններուն, թէ՛ ներքին, թէ՛ ալ արտաքին: Երբ



կը տեսնես, ամէն Կիրակի, մեր դպիրները, սարկաւագները, վարդապետները, եպիսկոպոսներն ու պատարագիչը, ու անոնց բոլորին զլիտն՝ վեհափառը, որոնք մեզի կը հրամցեն՝ դարերէն եկած շարականներ, սաղմոսներ, երգչախմբախառն մեղեդիներ, հաւատացեալը պէտք է լըջանայ, ինքնամփոփուի, խորունկ մտածէ, թէ ի՞նչ է այն ոյժը որ մեզ պահած է մինչեւ այսօր մնալ հայ մարդ, որքան ալ ունեցած ենք տերեւթափներ. մեր հաւատքը՝ ուրիշ ոչինչ: Նոյնիսկ իսլամացած ու քրտացած հայեր կը վերադառնան իրենց ակունքին ու կը մկրտուին քրիստոնէայ՝ հաւատքով: Ես տեսայ զիրենք 2010-ին Գերմանիոյ մէջ:

Երբ ամէն Կիրակի, սկսելով ժամերգութենէն, եկեղեցի կը յաճախեմ, ըլլա՛յ այդ Պէյրութի զանազան եկեղեցիները՝ Սուրբ Նշան, Անթիլիաս, Խալիլ Պետելի, Զալքա, կամ այլուր, Սուրբ Էջմիածին, Պաղտատ, Փարիզ, Կ. Պոլիս, Ամման, շատ կարեւորութիւն կու տամ պատարագիչին յստակ ձայնին հնչաբանութեան, դպիրներուն եւ սարկաւագներուն կեցուածքին ու աղօթելուն, եւ ժողովուրդին մասնակցութեան այդ սրբազան պատարագին: Առանց շուրջս նայելու, կը հետեւիմ բառ առ բառ այդ սուրբ արարողութեան՝ սկսելով զգեստաւորման հանգրուանէն, ժամամուտքէն, հաւատամքէն, սրբասացութենէն մինչեւ զոջումն ու արձակումն: Երբեմն կը մնամ հոգեհանգստեան կարգին: Աչքերս երկինք սեւեռած, կը վերանամ՝ երբ կը լսեմ «Թագաւոր Երկնաւոր»ը, հաւատամքէն առաջ՝ «Փառք քեզ Տէր Աստուած մեր»ը եւ «Սուրբ, Սուրբ»ը, վերջաւորութեան՝ «Ովսաննա՛ Ի Բարձունս»ը:

Այս երեք շարականներուն բաղդատականն ու գնահատականը կ'ընեմ վերել յիշած ու յաճախած եկեղեցիներուն երգչախումբերուն ու պատարագողներուն: Բոլորն ալ կը գտնեմ անգուգական: Շատ կը ցաւիմ բոլոր հայորդիներուն վրայ, որոնք պայմաններու բերումով, կամ իրենց տգիտութեամբ, անհեթեթ վարմունքով կամ անհոգութեամբ ու մակերեսային կեցուածքով՝ կը բացակային ու կը կորսնցնեն եզակի առիթները Կիրակի օրերուն: Շատ կարեւորութիւն կու տամ քարոզիչին խօսքերուն, տեսակ մը կրօնա-բարոյական դասաւանդութիւն մըն է, որ կը յիշեցնէ իմ դպրոցական օրերուս բարոյախօսութիւնները:

Պատգամս այն է, որ ամէն Կիրակի եկեղեցի յաճախելը, պատարագին սկիզբէն ներկայ ըլլալը, հաւատքով կրօնական արարողութեան լըջօրէն հետեւիլն ու մասնակցիլը, մուտքին մոմ մը վառելը որպէսզի լուսաւորուի հաւատացեալին հաւատքը՝ հիմնական պարտականութիւն կը նկատեմ: Այս հոգեւոր ժամադրութիւնը մեր երկնային Հօր՝ Աստուծոյ հետ, կը մաղթեմ բոլորիս: Կը պահանջուի ինքնագիտակցութիւն, կամք ու հաւատարմութիւն մեր հոգեւոր ամրոցներուն գոյատեւման ու մեր կրօնական մշակոյթի յաւիտենականութեան համար:

Թագաւորներ եւ նախարարներ ժամանակաւոր են, Կաթողիկոսներ ցկեանս, իսկ Հայաստանեայց Եկեղեցին յաւերժական:

ՄԿՐՏԻՉ ՅԱԿՈԲ ՊՈԻԼՏՈՒՔԵԱՆ

Լիբանանի Կեդրոնական Դրամատան

Փոխ Կառավարիչ 1985-1990

Երուսաղէմ եւ Կոստանդնուպոլիս

Երուսաղէմի եւ Պոլսոյ Հայոց Պատրիարքութեանց միջազգային կարգավիճակը եւ անոնց նպաստը Միջին Արեւելքի քրիստոնէութեան

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Կաթողիկոսութեան կայքէջին վրայ լոյս տեսած է վերջերս կայացած եպիսկոպոսական ժողովին վերաբերեալ հաղորդագրութիւն մը, որուն մէջ աշխարհի տարբեր թեմերու ներկայացուցիչներ ըստ երեւոյթին առաջարկ կը ներկայացնեն Երուսաղէմի եւ Պոլսոյ Պատրիարքարանները վերածել սովորական թեմերու:



Երուսաղէմի եւ Պոլսոյ Պատրիարքութիւններու վերացումը ո՛չ Ս. Էջմիածնի եւ ոչ ալ Հայ Եպիսկոպոսական Խորհուրդի իրաւասութիւններու սահմանին մէջ կիյնայ: Այս երկու հաստատութիւնները միջազգային դաշնագիրներով վաւերացուած տիեզերական կարգավիճակ կը վայելեն:

Քրիստոնէութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչէն եւ Տրդատ թագաւորէն առաջ Հայաստան մուտք գործած է Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Հայերուն միջոցաւ: Անաստաս Վարդապետ անունով հայ կղերականի մը վերագրուող փաստաթուղթ մը կը թուէ Երուսաղէմի մէջ Հայերու պատկանող 70 վանքեր եւ եկեղեցիներ, 7րդ դարէն առաջ: 5րդ դարու կէսերուն Հայերը Երուսաղէմի մէջ հաստատած էին դպրատուն մը, որ նաեւ կը ներկայանար որպէս կարեւոր մտաւորական կեդրոն մը, ուր նկատառելի թիւով կրօնական, կանոնական եւ հայրապետական գրութիւններ հայերէնի թարգմանուած էին: Հայ եկեղեցւոյ մէջ օգտագործուած հայերէն ճաշոցը յունարէնէն թարգմանուած են: Հայ եկեղեցւոյ ծէսը Ս. Քաղաքի (5րդ դարուն) Ս. Յակոբի յունարէնէն հայերէնի թարգմանուած ծէսն է: 2008ին, Փրոֆ. Աբրահամ Տէրեան հրատարակեց «Երուսաղէմի Մակարիոս, թուղթ առ Հայս, յետ Քրիստոսի 335» կոչուած ուսումնասիրութիւն մը (Ս. Վլատիմիրի դպրեվանքի տպարան եւ Ս. Ներսէս Հայկական դպրեվանք, Նիւ Եորք): Նամակը ստորագրուած էր Մակարիոս Երուսաղէմի եպիսկոպոսի կողմէ, Կոստանդին կայսեր պատուէրով, հսկելու համար Ս. Դամբարանի եկեղեցւոյ շինութեան: Ան կը պատասխանէր նոր հաստատուած Հայ եկեղեցւոյ Մկրտութեան եւ Հաղորդութեան վերաբերող հարցերուն: Փաստաթուղթը թուագրուած է 335ին, Հայաստանի կողմէ քրիստոնէութեան որպէս պետական կրօն ընդունուելէն շուրջ 30 տարի վերջ: Զանազան խճան-կարներու վրայ յայտնուած հայկական արձանագրութիւններու գոյութիւնը եւ հայկական տա-ռերու Հայաստանէն դուրս գործածութեան նորագոյն փաստերը ամենէն վստահելի վկայու-թիւններն են Սուրբ Հոդերու վրայ Հայերու գոյութեան: Երուսաղէմի Մուսրարար թաղին 6րդ դարու խճանկար մը կը կրէ



«Տիրոջ կողմէ ճանչցուած Հայերու յիշատակին եւ փրկութեան» ար-ձանագրութիւնը: Ասիկա արձանագրութիւն մըն է Երուսաղէմ ուխտի գացած հազարաւոր Հայերու յիշատակին:

Երբ 638 թուականին Սուրբ Հոդերը Արաբներու կողմէ գրաւուեցան, Երուսաղէմի Հայկական Աթոռը ստացաւ յոյն պատրիարքութեան համահաւասար կարգավիճակ: Երբ Սալահէտտին 1187ին Երուսաղէմը գրաւեց - որպէս Լատիններու եւ Յոյներու երդուեալ թշնամի - յարմար դատեց Հայերուն յանձնել Սուրբ Վայրերու պահպանութեան առանձնաշնորհումը: Ասիկա պատահեցաւ Հայոց Աբրահամ Պատրիարքի (1180-91) գահակալութեան ժամանակ: Երուսաղէմի փոքր հայկական համայնքը - որ կը բաղկանար 500 կղերականներէ եւ 1000 ընտա-նիքներէ - իրաւասութիւնը ստացաւ հսկելու գաղութի ապահովութեան եւ ամբողջ տարածաշրջանի մէջ կրօնքի ազատութեան, ինչպէս նաեւ Ս. Վայրերէն ներս իրենց առանձնաշնորհումներու եւ կալուածներու ամբողջական տիրապետութեան: Ս. Վայրերու՝ 1850ին եւ յաջորդ տարիներուն բազմիցս վերահաստատուած կարգավիճակը արդիւնքն էր պատմական զարգացումին, որու սկզբնաւորութիւնը կ'երթայ մինչեւ քրիստոնէութեան առաջին դարերը: Հայոց, յոյն եւ լատին Պատրիարքութեանց իրաւունքներն ու առանձնաշնորհումները վերահաստատուած են Փարիզի 1856ի եւ Պերլինի 1878ի խորհրդաժողովներուն կողմէ: Օսմանեան «Կարմիր սուլթան» Ապտիլիամիտը հեղինակն է - Հայոց Պատրիարք Յարութիւն Վեհապետեանի (1885-1910) օրով - 1888ին Յուլիս 25ին հրապարակուած հրամանագրին (ֆէրմանին), որ կը վերահաստատէր Հայոց Պատրիարքութեան գերագոյն իշխանութիւնը ամբողջ Օսմանեան կայսրութեան Հայերուն վրայ եւ անգամ մը եւս Երուսաղէմի Աթոռը կը հռչակուէր որպէս՝ «Պատրիարքութիւն Հայոց Ս. Գերեզմանի, Երուսաղէմի, Կազայի, Թրիփոլիի, Եթովպիացիներու, Ղպտիներու եւ այլ համայնքներու»: Այս հրամանագիրը կը հաստատէր որ Հայոց Պատրիարքը կը վայելէր Բարձրագոյն Դրան ամբողջական պաշտպանութիւնը եւ ունէր օրինական անկախութիւն: Հայոց Պատրիարքութեան իրաւունքները պաշտպանուած էին նաեւ 1919ի Վերսայլի դաշնագրով: Պաղեստինի թրքական տիրապետութեան շրջանին Սրբոց Յակոբեանց Վանքը բարգաւաճեցաւ Օսմանեան տիրապետութեան տակ: Ասիկա հետեւանքն էր մէկ կողմէ Հայ Ամիրաներու Պոլսոյ Բարձրագոյն Դրան մօտ ունեցած ազդեցութեան եւ միւս կողմէ թրքական Երուսաղէմի յոյն եւ լատին համայնքներու միջեւ «հաւասարակշռութիւն պահելու քաղաքականութեան»: Հեզնական է այս իրողութիւնը որ «Կարմիր սուլթանը» կը ճանչնար Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանի կարեւորութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ: Պատրիարքարանի որպէս «թեմ» աստիճանագրկումը ուրախութեամբ պիտի ընդունուի Իսրայէլի կողմէ եւ ճակատագրական հարուած մը պիտի ըլլայ Միջին Արեւելքի քրիստոնէութեան վիճակին:

Պաղեստինը, որ նախապէս կառավարուած էր բրիտանական յանձնակատար իշխանութեան կողմէ եւ որ փոքր ի չափէ կարգ ու կանոն հաստատած էր շրջանին վրայ, Մայիս 1949ին քաշուեցաւ ի նպաստ Իսրայէլի պետութեան հաստատութեան: Տիրան Ներսոյեան Պատրիարքը յուշագիր մը ուղարկեց Միացեալ Ազգերու Խնամակալութեան Խորհուրդի տնօրէն Դոկտ. Ռալֆ Պենչին, յիշեցնելով նախապէս Միացեալ Ազգերու ընդհանուր ժողովի կայացուցած մէկ որոշումը, ըստ որուն Երուսաղէմը եւ իր շրջակայքը կը նկատուէին որպէս «Միջազգային Գօտի»: Տիրան Ներսոյեան Արքեպիսկոպոսի յուշագիրը



ողջադատ պատկերը կը ներկայացնէ Պատրիարքարանի Ս. Վայրերու տնօրէնութեան դերին եւ մաս կազմած է Ժընէի երեք խորհրդաժողովներու բանակցութեանց, պաշտպանելով Երուսաղէմի եղբայրակցութեան մէկ ձայնով մասնակցութիւնը Ս. Վայրերու տնօրինող խորհուրդին: (Տիրան Ներսոյեան 1904-1989): (Տէ՛ս.՝ Հայ եկեղեցւոյ պատմութեան փաստաթուղթեր, լոյս տեսած՝ Ս. Էջմիածին, 2004ին, էջ 305էն 308):

Միլիոնաւոր Հայեր գացած են Երուսաղէմ, քալած են Բեթղէհեմէն Գողգոթա Տիրոջ քալած ճամբով, կատարելով իրենց քրիստոնէական պարտականութիւնը սատարելով վանքին՝ ձեռագիրներու, սկիհներու, լապտերներու, սքեմներու կամ գորգերու նուիրատւութեամբ, ի յիշատակ իրենց եւ գալիք սերունդներուն, վերյիշելով Մարգարէին խօսքերը «Օրհնեալ է ան Սիոնի զաւակով»: Երուսաղէմի Գրիգոր Շղթայակապ Պատրիարքը (1715-1749) եւ Կ. Պոլսոյ Յովհաննէս Կոլոտ Պատրիարքը (1678-1741) հաստատեցին Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ միջեւ դաշինք մը՝ պահպանելու Երուսաղէմը մեր օրերու Հայց. եկեղեցիին համար: Թուրքերու գործած Ցեղասպանութեան զոհ հազարաւոր որբեր ապաստան գտան Ս. Յակոբի վանքին մէջ եւ անոնցմէ ոմանք դարձան 20րդ դարու Հայց. եկեղեցւոյ մտաւորական եւ կրօնական երեւելի ղեկավարներ: Արմաշի Աստուածաբանութեան դպրեւանքի հիմնադիրը հասցուց իմաստուն եպիսկոպոսներու ամբողջ սերունդ մը, որ առաջնորդեց Հայց. եկեղեցին իր գոյութեան ամենէն դժուար ժամանակաշրջաններէն մէկուն մէջ: Անոնց շարքին կարելի է յիշել Մաղաքիա Օրմանեան (1841-1918), Բաբգէն Կիլիսեւեան (1868-1936), Եղիշէ Դուրեան (1921-30), Թորգոմ Գուշակեան (1931-39), Մեսրոպ Նշանեան (1939-44), Կիրեղ Իսրայէլեան (1944-49), Տիրան Ներսոյեան (1904-1989) եւ Եղիշէ Թրթռեան (1960-1990): «Մեկնողներուն» վերնագրուած բանաստեղծութեան մը մէջ Պատրիարքը յուզիչ կերպով կը յիշէ անունները որբերուն «որոնք քալեցին անապատի աւազներուն վրայ»՝ Վանէն Մալմաստ մինչեւ Նահր Օմար, մինչ ուրիշներ «լուռ ինկան որպէս արցունքի կաթիլներ, հազարաւոր երազներով»: Հայաստանի սովետականացումէն ետք, Սուրբ Յակոբի եղբայրակցութիւնը (Սերովբէ Արք. Մանուկեան, Սիոն Մանուկեան, Պսակ Դումայեան, Շնորհք Գալուստեան, Մամբրէ Գալֆայեան, Բաբգէն Վարժապետեան, Հայկազուն Աբրահամեան, Ասողիկ Ղազարեան, Տիրան Ներսոյեան, Թորգոմ Մանուկեան եւ ներկայիս Խաժակ Պարսամեան) հոգացած է Մայր Հայրենիքէն դուրս բոլոր թեմերու կարիքները: Սփիւքի մէջ պաշտօնավարած Ս. Էջմիածնի առաջին կղերականներն են Արսէն Արք. Պերպերեան եւ Ներսէս Պոգապալեան, որոնք 1965էն ետք գործած են Մեծն Բրիտանիոյ թեմէն ներս: Միայն ասոր համար իսկ Ս. Էջմիածինը եւ հայ ազգը պէտք է յաւիտենապէս շնորհակալ ըլլան: Մինչ Կիլիկիոյ Աթոռը կ'անտեսէր Ս. Էջմիածնի Աթոռը, Երուսաղէմի Պատրիարքարանը հաւատարիմ կը մնար անոր եւ կը կատարէր ամէն պարտականութիւն, որ իրմէ կը պահանջէին Էջմիածնի կաթողիկոսները:

Երբ Հայաստանեայց եկեղեցւոյ սահմանադրութիւնը կազմաւորման ընթացքի մէջ էր Վազգէն Ա. Կաթողիկոսի օրով՝ մեծ իրաւագէտ Տիրան Արք. Ներսոյեանի եւ ակադեմիկոս Վազգէն Յակոբեանի աջակցութեամբ, Ներսոյեան Արքեպիսկոպոս ակամայ կը մասնակցէր սահմանադրութեան ձեւաւորման, որովհետեւ ան համոզուած էր թէ «Հայց. եկեղեցին - ինչպէս արեւելեան եւ արեւմտեան եկեղեցիները - կարիքը ունի ծիսական կանոնի եւ ո՛չ սահմանադրութեան» (Յակոբ Ներսոյեան՝ «Դիտողութիւններ Հայց. եկեղեցւոյ



սահմանադրութեան առաջարկին», Երուսաղէմ 2001): Հին ժամանակներէն եկեղեցին տնօրինուած է ծիսական օրէնքներով եւ խուսափած է մտնել սահմանադրութեան կաշկանդումներու տակ, զանազան պատճառներով: Սահմանադրութիւններ որդեգրուած են բացառիկ եւ շատ իւրայատուկ պայմաններու մէջ, ինչպէս 1863ի Կ. Պոլսոյ Հայոց Ազգային Սահմանադրութիւնը, կամ ցարական Ռուսաստանի 1836ի Պոլոժենիան, որ Հայց. եկեղեցին վերածեց Ազգային Վարչութեան կրօնական հարցերու մասնաբաժնի մը: Ձոյգ սահմանադրութիւնները ընդունուած կամ պարտադրուած էին Հայց. եկեղեցւոյ, դիրացնելու համար իր յարաբերութիւնները երկու յատուկ իշխանութիւններու՝ ցարական Ռուսաստանի եւ Օսմանեան Թուրքիոյ հետ: Անկարելի է մէկ Սահմանադրութեամբ կառավարել բազմազան թեմերը, որոնք կը գտնուին իրարու անյարիւր օրէնքներով տարբեր երկիրներու մէջ: «Եթէ եկեղեցին այդպիսի "Սահմանադրութիւն" մը հաստատէ, ան դատապարտուած պիտի ըլլայ մնալու որպէս օդին մէջ արտայայտուած անիմաստ խօսք եւ դառնալու աւելի վնասակար քան թէ օգտակար» (Տիրան Ներսոյեան, փաստաթուղթեր, էջ 527): Այս յստակ ազդարարութիւնը մեզի հոս հասցուց: Ան այս քննադատութիւնը կը կատարէ 1962 Յուլիս 28ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա.ին ուղղուած երկար նամակի մը մէջ, ի պատասխան անոր իրեն ուղարկած Սահմանադրութեան նախագիծին (Հայց. եկեղեցւոյ պատմութեան փաստաթուղթեր, թիւ 212-213, էջ 460-480, թիւ 238, էջ 518-558, 1959 Յուլիս 28 եւ 1962 Յուլիս 29): Այս գրութեան մէջ ես պիտի անդրադառնամ միայն կարգ մը դիտողութիւններու, որոնք ուղղակի կը վերաբերին իմ նիւթիս:

Յօդուած 84 (էջ 477) «Կաթողիկոսը լիակատար իշխանութիւն ունի Հայ եկեղեցւոյ վարչութեան վրայ»: Այս հաստատումը անորոշ է եւ իրականութեան չի համապատասխաներ: Ոեւէ մէկը որ պատմութիւն կը գրէ, պէտք չէ շփոթէ փափաքը իրականութեան հետ:

Յօդուած 85 (էջ 478) - Պապականութիւն թելադրող վիճակ մը կը ներկայացուի Կաթողիկոսի անձին շուրջ: Աւելի ճիշդ է ըսել՝ «Հայ եկեղեցւոյ միութիւնը կ'ապահովուի Կաթողիկոսի կանոնական վերին իշխանութեամբ՝ ի գլուխ եպիսկոպոսական դասուն»:

Հայ Եկեղեցւոյ տիեզերապէս ճանչցուած եւ իր Պատրիարքով ղեկավարուած երկրորդ հայկական համայնքը Պոլսոյ Հայոց Պատրիարքարանն է: 381ի Կ. Պոլսոյ Տիեզերական Խորհուրդի երրորդ կանոնը հաստատեց Կ. Պոլսոյ պատուոյ դիրքը եկեղեցական նուիրապետութեան մէջ, անմիջապէս Հռոմէն ետք: 451ի Քաղկեդոնի ժողովը հաստատեց Կ. Պոլսոյ նախապատուութիւնը՝ Անտիոքի եւ Աղեքսանդրիոյ Պատրիարքարաններուն եւ ամբողջ Փոքր Ասիոյ շրջաններուն վրայ: Պոլսոյ մէջ հայկական ներկայութիւնը սատարած է Կոստանդին կայսեր օրերէն իսկ - Արքայական քաղաքի մշակութային եւ նիւթական բարգաւաճումին: Հայ պատմագէտ Ագաթանգեղոս իր «Հայոց Պատմութեան» մէջ կը նկարագրէ Դ. դարու Հայոց արքայ Տրդատի եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի այցելութիւնը Կոստանդին Ա. կայսեր՝ այս երկուքին քրիստոնէայ ղեկավարներ դառնալէն ետք (Հ. Պաղտիկեան «Դաշանց Թուղթ», РВН 2(2004), 65-115, Դոկտ. Վրէժ Ներսիսեան, «Տրդատ հանդիպեցա՞ւ Կոստանդին Մեծին», ННН, vol. XIX, 1999, էջ 65-70): Հայ մատենագիր Ղազար Փարպեցի կը նկարագրէ նորահաստատ հայկական քրիստոնէական պետութեան եւ Կ.



Պոլսոյ սերտ կապերը հետեւեալ բառերով. - «Իմաստութեան հոսք արքայական քաղաքէն»։ Մովսէս Խորենացին կը հաստատէ որ ինք այցելած է Կ. Պոլիս եւ կը ներկայացնէ մայրաքաղաքի շէնքերու ման-րամասն նկարագրականը։ Կորին կը վկայէ, թէ Մեսրոպ Մաշտոց «ձեռք ձգեց բազմաթիւ հոգեշունչ գիրքեր եկեղեցւոյ հայրերէն»՝ Կ. Պոլիսէն եւ զանոնք փոխադրեց Հայաստան։ Հայոց գիրքերու գիւտէն ետք Մեսրոպ Մաշտոց իր աշակերտներէն Ղեւոնդը, Եզնիկը եւ Կորինը ուղարկեց Կ. Պոլիս։ Հայոց արքաներ եւ կաթողիկոսներ իրենց քաղաքական եւ մշակութային կապերու առաջնահերթութիւնը վերապահեցին Կ. Պոլսոյ։ Հայերէն Աստուածաշունչի բարեփոխեալ օրինակը հիմնուած է՝ 431ի Եփեսոսի Տիեզերական ժողովի մասնակից հայ կղերականներու կողմէ Հայաստան բերուած յունարէն բնագիրներու վրայ։

1453ի աշնան Սուլթան Մեհմետ Բ. գրաւեց Կ. Պոլիսը։ 1461ին Կ. Պոլսոյ Պատրիարքին՝ որպէս ամբողջ Օսմանեան կայսրութեան Հայերու առաջնորդ, պարտականութիւն յանձնուեցաւ վերահսկել «Միլլէթ»ի ընկերային եւ կրօնական հարցերուն։ Հայոց Պատրիարքը հիմնական դեր ունեցաւ 19րդ դարու հայկական «Միլլէթ»ի բարեփոխման ծրագիրներուն մէջ, որոնք 1847ին վաւերացուեցան Սուլթանին կողմէ, այսպիսով հիմը դնելով 1863ի Հայկական Հոգեւոր Գերագոյն Խորհուրդին, հաստատելով այն օրէնսդրութիւնը որ յետագային ճանչցուեցաւ որպէս Հայոց Ազգային Սահմանադրութիւն։ Յունուար 1916ին Երիտ. Թուրքերը վերջ դրին եւ չեղեալ համարեցին Հայոց Ազգային Սահմանադրութիւնը եւ օրուան Պատրիարք Զաւէն Տէր Եղիայեանը արքայութեան Պաշտատ եւ Մուսուլ, ուր ան մնաց մինչեւ պատերազմի աւարտը։ Դաշնակիցներու յաղթանակը եւ Կ. Պոլսոյ գրաւումը 1918 Նոյեմբեր 20ին պարտադրեց պարտուած Թուրքիոյ՝ վերահաստատել Հայոց Պատրիարքարանի օրինական կարգավիճակը։ Զաւէն Պատրիարք բրիտանական Աքապիա խորտանաւով 1919 Փետրուար 19ին վերադարձաւ Կ. Պոլիս։ 1441ին Կաթողիկոսութեան Կիլիկիայէն Ս. Էջմիածին փոխադրութենէն ետք 1520էն 1910ի ժամանակաշրջանին 31 կաթողիկոսներ գրաւած են Ս. Գրիգոր Լուսաւորիչին արժող (Օրմանեան, «Ազգապատում» հատոր 1-III, Պէյրութ, 1965)։ Ասոնցմէ երկուքը Բիւզանդիոնէն (Կ. Պոլիս) եւ չորսը՝ նախկին Կ. Պոլսոյ Պատրիարքներ եղած են. - Գրիգոր 11րդ Բիւզանդացի (1536-1545), Աղեքսանդր Բ. Բիւզանդացի (1753-1755), Մատթէոս Ա. Կ. Պոլսեցի (1858-65), Գեորգ Դ. Կ. Պոլսեցի (1866-82), Մկրտիչ Ա. Վանեցի Խրիմեան (1892-1907) եւ Մատթէոս Բ. Կ. Պոլսեցի (1908-1910)։

Ցեղասպանութեան 100ամեակի նախօրեակին Թուրքերուն ընծայաբերուած մեծ նուէր մը պիտի ըլլայ, եթէ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը - որ փուշ մըն է խրուած Թուրքիոյ պետութեան սրտին մէջ - աստիճանազրկուի եւ ստանայ թեմի կարգավիճակ։ Վերջին երկու տասնամեակներուն թրքական իշխանութիւնները խափանած են Կ. Պոլսոյ նոր Պատրիարքի մը ընտրութիւնը։ Եթէ ապագային օր մը Թուրքիան ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը եւ որոշէ մշակութային եւ նիւթական հատուցումներ կատարել, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը՝ որպէս Արեւմտահայոց հարցերու գլխաւոր կառավարիչ, պիտի նկատուի բանակցող հիմնական մարմինը եւ ստանայ Հայոց Ցեղասպանութեան զոհերու իրաւունքներու հատուցումները։



Վերջապէս, արեւմտահայ ամբողջ Սփիւռքն է - որուն համար Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանները դարեր շարունակ եղած են մտաւորական եւ բարոյական միջնաբերդեր -, որ աստիճանագրկուելով՝ թեմի կարգավիճակ ստանալու սպառնալիքին ենթակայ է:

Մեծ դժբախտութիւն մըն է, որ Յեղասպանութեան զոհերու յիշատակը ուղղակի եւ անամօթաբար կը չարաշահուի մեր ստեղծած տագնապներով: Յաւալի է տեսնել Երուսաղէմի եղբայրակցութիւնը վարկաբեկող փորձերը՝ Յեղասպանութեան զոհերու յիշատակին անհաւատարիմ դառնալու ամբաստանութեամբ:

Հայր Դոկտ. Վրէժ Ներսէս Ներսիսեան

Գրական-Մշակութային

Հաւաքական Աշխատանքի Հրամայականը (Բ) «...մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»

Շահան Շահնուր

Շարունակութիւն նախորդ թիւէն

Դոկտ. Աբէլ Քինյ. Մանուկեան, Ժընեւ, Հոկտեմբեր 2014

Առաջին թարգմանութիւնը

Ժամանակ չկար վատնելու: Քաղաքական կացութիւնը, որուն մէջ օղակաւորուած էր Հայաստան՝ դաժան էր, ու դեռ կրնար թշնամին զայն յոռեգոյնին հասցնել, եթէ ազգին գոյութեան պահպանման գործօնը չաշխատէր ու չկատարէր այն դերը, որուն համար ան ստեղծագործուած էր: Հարկ էր անմիջապէս կազմակերպել մեղուաջան աշխատանք, գրեթէ ոչինչէն արարելու համար գէթ մշակութային անկախութիւնը ազգին, որուն նախաձեռնած էր Ս. Մեսրոպ Մաշտոց, զօրեղ գաղափարակիցներ ունենալով Ս. Սահակ Պարթեւը եւ Վոամշապուհ արքան:

Առաջին գործը, որ ձեռնարկեցին թարգմանիչ վարդապետներ՝ Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնն էր ասորական թարգմանութեան Փեշիտտա կոչուած բնագրէն, 405-408 թուականներուն:

Աստուածաշունչի Բ. թարգմանութիւնը իրականացաւ յունական Եօթանասնից կոչուող բնագրէն, զոր Եփեսոսի Գ. Տիեզերական



ժողովին մասնակցելէ ետք Կ. Պոլսէն իրենց հետ Հայաստան բերած էին Մաշտոցի աշակերտները՝ Ղեւոնդ Վանանդեցին, Կորիւնը, Եզնիկ Կողբացին եւ Յովսէփ Պաղնացին: Աստուածաշունչի Ա. թարգմանութիւնը ասորական բնագրի հիման վրայ կը կոչուի Նախնական կամ Փութանակի թարգմանութիւն, բայց Բ.ը, յունական

բնագրի հետեւողութեամբ՝ առաջինի բոլոր բնագիրները կը համեմատուին, կը սրբագրուին, կ'ամբողջացուին ստեղծելով գրեթէ նոր եւ կատարեալ թարգմանութիւն մը, որ իսկապէս նաեւ օտար մասնագէտներու գնահատումով «Թագուհի Թարգմանութեանց» (արտայայտութիւնը Լա Կրօզինն է) կը կոչուի: Ահաւասիկ ա՛յս է յայտնի Սահակ Մեսրոպեան Աստուածաշունչ մատեանի օրինակը, որ հայերս կ'օգտագործենք ցայսօր:

Թարգմանիչ վարդապետներու աւագ եւ կրտսեր սերունդ

Թարգմանիչ վարդապետներու փաղանգը մեր պատմութեան եւ գրականութեան մէջ կը տարբերի երկու սերունդներու դասակարգումով՝ աւագ եւ կրտսեր: Աւագ կամ երէց սերունդ կը համարուին՝ Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Յովսէփ Վայոցձորեցի, Ղեւոնդ Երէց Վանանդեցի, Եզնիկ Կողբացի, Կորիւն, Յովհան Խոստովանող, Մուշէ Տարօնեցի, Յովհան Եկեղեցացի, Ստեփանոս Տարօնեցի եւ ուրիշ երախտաշատ անուններ:

Իսկ Թարգմանչական ստեղծագործութիւնները, ըստ իրենց բովանդակութեան, կարելի է վերածել հետեւեալ դասակարգումներուն.

Ա.Աստուածաշունչ մատեան,

Բ.Ծիսական երկեր՝ պատարագամատոյց, ժամագիրք, եւայլն,

Գ.Հայրաբանական գրականութիւն՝ եկեղեցւոյ հայրերու քրիստոնէական եւ իմաստասիրական հեղինակութիւնները, ճառերն ու քարոզները,

Դ.Վկայաբանական եւ վարքագրական գրականութիւն՝ եկեղեցական նշանաւոր հայրերու վարքն ու գործերը,

Ե.Պատմական գրականութիւն:



Յունական եւ ասորական գրականութենէ թարգմանութիւններ՝ «Սրբոյն Եփրեմի Մեկնութիւնք Հին Կտակարանի», Յակոբ Մծբնացիի՝ «Ճառք», Յովհան Ոսկեբերանի՝ «Մեկնութիւն Աւետարանին Յովհաննոս», Կիրէղ Երուսաղէմցիի՝ «Կոչումն Ընծայութեան», Բարսեղ Կեսարացիի՝ «Ճառք», Պրոկղի, Եւագր Պոնտացիի, Եփրեմ Խուրի Ասորիի, Գրիգոր Նազիազանցիի եւ ուրիշ շատերու ստեղծագործութիւնները:

Ասոնց հետեւողութեամբ կը ստեղծուի հեղինակային ինքնուրոյն գրականութիւն՝

Ագաթանգեղոսի «Պատմութիւն»ը, Կորինի «Վարք Մաշտոցի» երկը, Ս. Գրիգոր Լուսաւորիչին վերագրուող «Յաճախապատում Ճառեր»ը, Եզնիկ Կողբացիի «Եղծ Աղանդոց»ը եւ այլ ստեղծագործութիւններ:

Կրտսեր թարգմանիչներ

Երեց թարգմանիչներուն գործը շարունակեցին կրտսեր թարգմանիչները: Անոնք Ե. դարու Բ. կէսին հիմնեցին այսպէս կոչուած Յունաբան Դպրոցը, որ իր հետագայ ծաղկումը ապրեցաւ մինչեւ Է. դար:

Երբ կ'անդրադառնանք թարգմանիչ վարդապետներուն, խօսքը շուրջ հարիւր մշակոյթի երախտաւորներու մասին է. կ'ակնարկենք մշակոյթի այն գործիչները, որոնք առաջնորդուած էին Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Ս. Սահակ Պարթեւ Հայրապետի լուսաճաճանչ հեղինակութեամբ: Թարգմանիչ վարդապետներու աւագ կամ երեց խումբը ուղղակի ձեռնասուններն էին Ս. Սահակի եւ Մեսրոպի, իսկ թարգմանիչ վարդապետներու կրտսեր խումբը կը հանդիսանար անոնց աշակերտներուն աշակերտները, հիմնականօրէն՝ Յունաբան Դպրոցի ներկայացուցիչները:

Գնահատական մը

Մեր պատմութիւնն ու գրականութիւնը երախտագիտական բազմաթիւ գնահատումներով, մեկնաբանութիւններով, լեզուական, մշակութային, հասարակական եւ գաղափարաքաղաքական վերլուծումներով անդրադարձած են մաշտոցեան գիտին: Բազմաթիւ սերունդներ՝ հայ եւ օտար մասնագէտներ փորձած են գնահատել անգնահատելին ու դեռ դարերու հոլովոյթին մէջ այդ պիտի շարունակուի, այնքան ատեն որ հայը գոյութիւն ունի, իսկ հայերէնը պիտի յարատեւէ ըլլալ անոր կենդանի լեզուն: Մեծագոյն գնահատականը պիտի որ հայ ժողովուրդին գոյութիւնը նկատուի, քանզի դեռ իր մայրենին հայերէնն է, իր ստեղծագործ մշակոյթն ու գիրն է, իր եզակիութեամբ, ինքնութեամբ եւ անկախութեամբ: Ազգի մը գոյութեան պահպանման գործօնը անպայման գիրը չէ իսկապէս, եթէ ան միայն գրաւոր հաղորդակցութեան միջոցին կը ծառայէ: Հայոց նշանագրերը մեր ազգային նկարագիրն ու հոգին կոփեցին իրենց ֆիզիքական ու հոգեկան արժէքներու ամբողջութեան մէջ: Աստուածային խորունկ ներշնչումով Ս. Մեսրոպ ունեցաւ իր երկունքին մարմին տուող տեսիլը՝ իր ազգի հաւաքականութեան ոսկեծոյլ կաղապարը նորաստեղծ մշակոյթի մը քուրային մէջ: Հայոց նշանագրերու գիտը թարգմանչական արուեստին ճամբով ծնունդ տուաւ հայոց ազգային մշակոյթին: Գիրը չդարձաւ լոկ գրաւոր հաղորդակցութեան միջոց, այլ գոյութենական մնայուն արժէք եւ ազգային



գաղափարախօսութիւն: Սահակ-Մեսրոպեան այս ոգին էր, որ տոգորուած անսպառ կենսունակութեամբ, զինք իր մտքին, սրտին ու արեան կանչին մէջ ապրող ու ապրեցնող ժողովուրդին հետ մաքառեցաւ քաղաքական թէ կրօնական ամէն փոթորկումներուն ու մոայլ ժամանակներուն մէջէն, դառնալով հետզհետէ աւելի նուիրական, աւելի բիրեղ ու խորհրդաւոր:

Եթէ անդրադառնանք օտար հեղինակներու Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի գործունէութեան վերաբերեալ գնահատականներուն, այստեղ պիտի բաւարարուինք ընդամենը նշելու գերմանացի հայագէտ Մարկուարտի այն համեմատութիւնը, որ կ'ընէ իր իսկ ազգի լուսաւորիչներ՝ Պեպինի ու Վինֆրիդի գերման ժողովուրդին տուած ժառանգութեան հետ.

«Եթէ այս գործին հետ համեմատենք դանայեան այն պարգելը զոր Պեպինոս Փրանկ, քաղաքական ու եկեղեցական ամէն միջոց լիապէս ի ձեռին ունենալով՝ նուիրեց գերման ժողովուրդին, այն ատեն թէ՛ Պեպինոս եւ թէ՛ իւր զինակիրը՝ Վինֆրիդ, խեղճ թգուկներ կ'երեւան համեմատութեամբ մտքի այն հսկաներու: Ժողովուրդ մը, որ իր ծոցէն այնպիսի մարդիկ ծնած է եւ զանոնք իբրեւ իր դիւցազունները կը յարգէ, որչափ թէ անոնց օրինակին հետեւի, անկարելի է որ ի սպառ ջնջուի՝ որչափ ալ թուրք, քուրդ, թաթար, պարսիկ, ու բոլոր մեծ պետութիւնները հակառակ ըլլան անոր»:

Միանշանակ է, որ Հայոց Ոսկեդարը արգասիքն էր խմբային արարչագործ աշխատանքի հաւաքական գիտակցութեան, ազգային մէկ նպատակ իրականացնելու ուղղութեամբ կատարուած անձնուէր գոհողութիւններու, հաւատաւոր ու անխոնջ տքնութիւններու: Սոյն իրականացումին սրբազան նախաձեռնողները հանդիսացան Ս. Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթեւ եւ Վռամշապուհ թագաւոր, իրենց գործակիցներ ունենալով Թարգմանչաց վարդապետներու լուսաճաճանչ փաղանգը:

Թարգմանչաց Շարժումը

Իսկութեան մէջ, Թարգմանչաց Շարժման սկիզբ կը համարուի Ե. դարու առաջին կէտը՝ ներշնչուած հայոց նշանագրերու գիտով եւ Աստուածաշունչ մատեանի հայերէն թարգմանութեամբ, Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւ Կաթողիկոսի գլխաւորած, անոնց անմիջական աշակերտներու, ապա աշակերտաց աշակերտներու՝ աւագ եւ կրտսեր խումբերու իրագործած թարգմանչական, մեկնողական, նաեւ ինքնագիր ստեղծագործութիւններու արդիւնաւորութեամբ երեւցած իրադարձութիւնը, որ տեւեց մինչեւ Է. դար: Հետաքրքրական է սակայն, որ Հայ Եկեղեցին Թարգմանչաց դասուն մէջ ընդգրկած է նաեւ հետագայ դարերու արդիւնական հեղինակներու անուններ՝ մինչեւ ԺԲ. դար: Ի տարբերութիւն զանազան ուսումնասիրութիւններու, յատկանշական է ականաւոր բանասէր Թեոփիկի այս կապակցութեամբ հրատարակած ցանկը իր «Ամենուն Տարեցոյց»ին մէջ, Փարիզ, 1928 թուականին: Ստորեւ հայ մշակոյթի այդ երախտաւորներուն անուանացանկը.

Ե. դար.-



Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Կորիւն, Եզնիկ Կողբացի, Ղազար Փարպեցի, Մովսէս Խորենացի, Եղիշէ Ամատունի, Ղեւոնդ Երէց Վանանդեցի, Դաւիթ Անյաղթ, Մամբրէ Վերծանող, Գիւտ Ոթմսեցի, Յովհան Մանդակունի, Աղան, Տիրայր, Դանան, Վահրիճ, Բարգէն եւ Կոմիտաս

Զ. դար.-

Պետրոս Սիւնեցի

Է. դար.-

Յովհան Մամիկոնեան, Սեբէոս Բագրատունի, Մովսէս Կաղանկատուացի, Թէոդորոս Քոթենաւոր

Ը. դար.-

Յովհան Օձնեցի

Թ. դար.-

Յովհաննէս Դրասխանակերտցի, Թովմա Արծրունի

Ժ. դար.-

Գրիգոր Նարեկացի, Ստեփանոս Ասողիկ, Ուխտանէս Մեքաստացի, Խոսրով Անձեւացի

ԺԱ. դար.-

Գրիգոր Մագիստրոս, Արիստակէս Լաստիվերտացի

ԺԲ. դար.-

Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի, Յովհաննէս Սարկաւազ, Մատթէոս Ուռհայեցի:

Ուշագրաւ է որ, Ե.-ԺԲ. դար, Սրբոց Թարգմանչաց փառանգին մէջ ընդգրկուած են 36 լուսապսակ անուններ: Սոյնը, մեծ հաւանականութեամբ, դիտաւորեալ պատշաճեցում մը եղած ըլլալու է Ս. Մեսրոպ Մաշտոցի ստեղծագործած հայոց նշանագրերու 36 թիւին:

Մեսրոպ Մաշտոց իր մահկանացուն կը կնքէ 440 թուականին, ու կը թաղուի Երեւանէն ոչ հեռու Օշական գիւղը: Իր մահուրէն 3 տարի անց, հայոց հազարապետ Վահան Ամատունի եւ զօրավար Հմայեակ Մամիկոնեան, ի պատիւ եւ յիշատակ Մաշտոցի, իր գերզմանդամբարանին վրայ կը կառուցեն եկեղեցի մը, որ աւանդաբար դարձած է հայութեան կարեւորագոյն ուխտավայրերէն մէկը:

Կարելոր բացթողում մը

Վերը տարբեր առիթներով անդրադարձանք, որ հայոց գիրերու գիւտը եւ Թարգմանչաց ամբողջ Շարժումը հիմնական նախաձեռնողն էր Ս. Մեսրոպ Մաշտոց, իրեն անմիջական համախոհներ եւ սատարողներ ունենալով Վռամշապուհ թագաւորն ու Ս. Սահակ Պարթեւ



Հայրապետը: Հոս ամենեւին պէտք չէ անտեսել լուսաւոր դէմքը Վոամշապուի թագաւորին: Եթէ Սահակ Պարթեւ օրհնողն եղաւ Ս. Մեսրոպի առաքելութեան, իսկ գիրերու գիտէն ետք, իր փայլուն հելլենագիտութեամբ դեկավարողը Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան, պիտի ենթադրենք կամ նոյնիսկ համոզուած պիտի ըլլանք ըսելու, որ արքան Վոամշապուի չզլացաւ բանալու արքունի գանձարանը՝ նիւթապէս օժանդակելու համար Ս. Մեսրոպի ազգօգուտ գործունէութեան, Ասորիքի մէջ անոր կեցութեան շրջանին ու հետագային:

Մեր պատմութեան այս մոայլ ժամանակահատուածին մէջ խաղաղութեան կարճատեւ շրջանի մը ապահովումը, որու ընթացքին իրականացաւ հայոց նշանագրերու գիտն ու արդիւնաւորուեցաւ Թարգմանչաց Շարժումը, Վոամշապուի թագաւորի ճկուն քաղաքականութեան կը պարտինք: Առանց այս խաղաղութեան, նիւթական օժանդակութեան եւ պետական հովանաւորութիւններուն, թերեւս դժուար պիտի ըլլար պատկերացնել արդիւնաշատ գործը Ս. Մեսրոպի եւ յաջողութիւնը Թարգմանչաց ձեռնարկին:

Արդարեւ, այսօր անհասկնալի եւ անբացատրելի կը մնայ այն բացթողումը, (եթէ կարելի է ըսել), թէ ինչո՞ւ համար Հայ Եկեղեցին Ս. Մեսրոպի եւ Սահակ Պարթեւի կողքին չէ սրբացուցած նոյնքան նուիրական անուն մը՝ որպիսին է Հայոց Վոամշապուի Արշակունի թագաւորը:

Հակուած ենք դիտելու այլ եկեղեցիներու կանոնականացուցած սրբոց դասը, ուր այնքան յաճախ կը հանդիպինք թագաւորներու եւ իշխաններու անուններուն, որոնք շատ աւելի նուազ ծառայութիւններու կամ հաւատքի վկայութիւններու առթիւ, տուեալ եկեղեցիներուն կողմէ, տարբեր դարերուն մէջ, սուրբ հռչակուած են: Դեռ ի՞նչ պէտք է ընէր մեր քրիստոնէայ եւ հաւատաւոր թագաւորը Վոամշապուի, մեր եկեղեցական տօնացոյցին մէջ համապատասխան գնահատականով մը յարգուելու համար:

Հայ Սփիւռքն ու ներկայ իրավիճակը

Այնչափ կարեւոր այս նիւթին ստիպուած պիտի ըլլանք անդրադառնալ շատ հպանցիկ ակնարկով մը: Խօսքը ամենեւին չի վերաբերիր Հայաստանի իրականութեան, ո՛չ արեւելահայերէնին, ո՛չ ալ հոն որդեգրուած ուղղագրութեան: Սա պահուս մեր խորհրդածութիւններէն դուրս կը մնայ այդ անդրադարձը. ուրի՛շ առիթով: Հարցը սփիւռքահայութիւնն է եւ ընդհանրապէս արեւմտահայերէնի արդի նահանջը: Այս առնչութեամբ պիտի նախընտրէինք խօսքը տալ Շահան Շահնուրին, քաղուած մը ընելով իր «Նահանջը Առանց Երգի» երկէն.

«Ի՛նչ պէտք, ի՛նչ պէտք սակայն ըսել այս բոլորը որ արդէն իսկ այնքան անգամներ կրկնուած ըլլալու տոգոնութիւնը ունի: Ի՛նչ պէտք մանաւանդ զբաղիլ պարագաներով, որոնց լաւագոյն դարմանը բառերուն եւ խօսքերուն ոյժը չի կրնար կազմել բնաւ: Այո՛, տիպարը պատահական չէ, միայն ժամանակի մը ծնունդ չէ. սակայն մինչդեռ անցեալի մէջ կարելի էր մասամբ զինք անտեսել, իր վատառողջ մեղկացումը չեզոքացնել, թողլով որ ազգին թիւը բազմապատկելու իր միակ դերը կատարէ, հիմա անկարելի կը դառնայ իրեն հանդէպ



անտարբեր մնալ: Ոչ թէ որովհետեւ այժմ պատերազմ կայ ու կռիւ, ոչ թէ որովհետեւ այժմ ճակատամարտ կայ ու կենսապայքար, այլ որովհետեւ կայ բան մը աւելի ճակատագրական, աւելի աններող, կայ բան մը ահեղ, անդիմադրելի որ իր անունը կ'ոռնայ բոլոր քառուղիներէն. նահանջն է ան: Նահանջը, նահանջը հայերուն: Կռիւր սրբազան բան է, ճակատամարտը երբեմն նոյնիսկ օգտակար. անոնցմէ ազգ մը դուրս կու գայ պարտուած կամ յաղթական, սակայն երկու պարագային ալ դուրս կու գայ: Բայց նահանջը հոգիներու, գլխի պտոյտ տուող զառիթափին վրայ սա նահանջը կը ջնջէ, կը ձուլէ, կ'անհետացնէ ամէն բան: Իրա՛ւ, բազմաթիւ չեն այսպիսի զարգացած անտարբերներ, սակայն անդին կան ամբոխները անտաշ, անմիտ եւ ուժացած մարդոց, որոնք կարծես բնագոյաբար, կարծես արիւնով ու ծուծով ճիշդ նման են նախորդին: Անոր պէս առաջինը կ'ըլլան ընկրկող, մոռցող, ուրացող: Եւ կը կազմուի ահե՛ղ զանգուածը անոնց, որոնք կը նահանջեն ու այդ մեծ հոսանքին մէջ կը քշեն կը տանին միւսներն ալ, զանցառ բացառութիւններն ալ:

Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ. կը նահանջեն բարք, ըմբռնում, բարոյական, սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. մեղա՛յ, մեղա՛յ Արարատին:

Եղան հայեր, որոնք իրենց մորթը փրկելու համար վճարեցին ոսկի. եղան ուրիշներ, որոնք տուին հաւատք, կուտութիւն, եղան անոնք, որոնք լքեցին տուն, տեղ, երկինք. եղան դեռ վատեր՝ որ ուրացան ազգ եւ լեզու, եւ հերոսներ՝ որ տուին արիւն, կեանք, օր ու արեւ: Իսկ մենք՝ կը վճարենք իբրեւ փրկագին այն, որ պիտի գայ: Իբրեւ վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ՝ որոնք մեզմէ վերջ պիտի գային: Որովհետեւ այն որ պիտի գայ, պիտի ըլլայ օտար, բանիւ եւ գործով, կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, մեղա՛յ, մեղա՛յ Արարատին»:

Լաւատեսութեան իրաւունքով

Նոր Կտակարանի վերջին՝ Յայտնութեան գրքի դատաստանական սարսափազդու պատկերներով կամ յոռետեսութեամբ պիտի չուզէինք աւարտել Թարգմանչաց տօնին եւ մշակոյթի ամսուն ձօնուած մեր քանի մը ամփոփ խորհրդածութիւնները: Ինչքան ալ իրատեսութեան հիմք ըլլայ ընդունելու սփիւռքահայ կեանքին մէջ իրականացող նահանջը, այդուամենայնիւ պէտք է հաւատալ մաշտոցեան ոգիի յաղթանակին: Պէտք է ամբօրէն հաւատալ հայ դպրոցի առաքելութեան կարեւորութեան Սփիւռքի բոլոր տարածքներուն: Հոն ուր ընկրկած էր հայութեան քաղաքական ոյժը եւ ոչ մէկ հեռանկար կար ապագայի գորշութեան մէջ թէկուզ լոյսի աղօտ նշմար մը տեսնելու, մաշտոցեան ոգին զօրակոչի ենթարկեց ազգը՝ ինքնուրոյն մշակոյթ ստեղծելու եւ յաղթական գոյապայքար մը մղելու գալարուող դարերու ամեհի մրրիկներուն դէմ: Մօդուկներու նման պէտք չէ թառիլ ուրիշ մարմիններու վրայ եւ սեփական կենսապայքարը ապահովել փորձել ուրիշէն ծծած արիւնով: Սփիւռքը պէտք է իր աւիւնը գտնէ իր ներսիդիէն՝ բարեկարգելով եւ վերակազմելով իր ազգային-հասարակական կեանքի բոլոր կառոյցները: Ան իր նիւթական եւ բարոյական ներուժը պէտք չէ վատնէ գայն բաշխելով ուրիշներուն, պէտք չէ ինքզինք տարհամոզէ այն սխալ տեսութեամբ, թէ իր ճակատագիրը ձուլուելու օրհասականով է



կնքուած: Զարգացած ազգի մը քաղաքակրթութիւնը կարելի չէ դուրսէն կործանել, եթէ ան նախապէս ներսէն չքայքայուի: Եթէ ժողովուրդ մը չհաշտուի մեռնելու ինքնակործան գաղափարին հետ, կարելի չէ զայն մեռցնել: Յեղասպանութիւն տեսած, մահուան բովէն ու Տէր Զօրի անապատներէն վերապրելով Սփիւռք կերտած ժողովուրդ մը չի՝ կրնար մեռնիլ, չի՝ կրնար անհետիլ, եթէ ան իր գիտակցութեան ու հոգիին մէջ չփռշտացնէ կամքը յարատեւելու, միշտ առաջնահերթութիւնը տալով բարեկարգելու նախ իր սեփական տունը: Հետեւաբար, պէտք է առաւել եւս կռել-կռփել Սփիւռքի ինքնութիւնը՝ հզօր հայութիւն մը պահելու համոզումով:

Թարգմանչական արուեստով, մշակոյթին ճամբով հայր Ե. դարուն երկնեց ամբողջ ոսկեդար մը, իր ինքնութեամբ ազգերու ընտանիքին մէջ գոյատեւելու իր ուրոյն դիմագիծով եւ գաղափարախօսութեամբ: Այսօր ամէն հնարաւորութիւններն ու միջոցները ունինք պահելու եւ առաւել եւս զարգացնելու Սփիւռքի բոլոր տարածքներուն մեր սեփական տունը, եկեղեցին, դպրոցն ու ազգային, մշակութային ու քաղաքական կառոյցները. յումպէտս չսպառնք հայ կեանքին մեր պաշարը, եւ ընդհակառակը՝ մնանք կապուած մեր արմատներուն, մեր ինքնութեան՝ լաւատեսութեան ամէն իրաւունքով:

Տեսակէտ

ԴԱՐԱԴԱՐՁԱՅԻՆ ԽՈՀԵՐ՝ ԱՄԱՆՈՐԻ ՍԵՄԻՆ

ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ

2015 թուականն է:

Նախ եւ առաջ մեր պարտքն է շնորհակալութիւն յայտնել հայ ժողովուրդին արդար պահանջատիրութեան ջերմ կողմնակից - բարեկամներուն, որոնք պետական մակարդակով ընդունեցան ու ճանաչում բանաձեւեցին Հայոց Յեղասպանութեան: Անոնք կը մնան մեր մնայուն բարեկամները: Նոյն եւ հաւասարապատիւ մեր յարգանքը կ'ընծայենք պետական-քաղաքական - պատմագիտական այն հռչակաւոր անձնաւորութիւններուն, որոնք իրենց կեանքին օրինակով եղան նեցուկ մեր ազգային իրաւունքներու ճանաչման անյետաձգելի գործին: Ապա՝ անմիջապէս անցնիլ հետեւեալ կէտերու իրականացման.-

ա - Հայրենի պետութեան գիտակից յանձնառութեամբ, հայրենի եւ սփիւռքահայ բազմակողմանի կառոյցներու արդար մասնակցութեամբ, մօտաւորապէս՝ նման



«Հայաստան Համահայկական Հիմնադրամ»ի, կազմակերպել Համահայկական Միացեալ Գերագոյն խորհուրդ մը (կամ Գոնկրէս մը՝ միջազգային բառի օգտագործումով), իր մնայուն կեդրոնատեղիով, աշխատանքային հիմնական ծրագիրներով եւ վարչական լիազօրումներով տնօրինուած աշխատակազմով:

Այս հեղինակաւոր Մարմինն է որ պիտի լծուի մեր «Մեծ Երագ»ին իրագործման աշխատանքին: Յարդ պատրաստուած բազում նիւթեր կան, որոնց ցուցակագրումը պէտք է կատարուի յիշեալ կեդրոնատեղիէն ներս: Դատական թղթածրարներու պատրաստութիւնը բազում տարիներու աշխատանք կը պահանջէ, որուն սկզբնակէտը կրնանք յայտարարել 2015 թուականը:

Մնայուն կոչուող այս Մարմինն է որ պիտի կազմակերպէ արեւմտահայ ծագումով սփիւռքահայ տարագիր սերունդներու ցուցակագրումը, պիտի կազմակերպէ Հայ Սփիւռքը, եւ արդարօրէն լսելի պիտի դարձնէ սփիւռքահայութիւնը ոգեշնչող իտեալներն ու հետապնդած նպատակները: Մարմին մը՝ որ պիտի բանակցի հայրենի Ազգային Ժողովին հետ, եւ անկէ բխած պաշտօնական պատուիրակութիւնը պիտի ներկայանայ Միջազգային դատական ատեաններուն, յանուն սփիւռք դարձած տարագիր արեւմտահայութեան, որ իսկական ժառանգորդն է Արեւմտահայաստան գրաւեալ հայրենիքին:

Երբ կարենանք իրականացնել այս Առաջին Քայլը, որոշ չափով մեղմացած կըլլայ «կուսակցութիւններուն վերագրուած մեղադրանքը» իբրեւ պատճառ «ազգային անհամերաշխութեան»:

բ - 2015 թուականը եւ անոր յաջորդելի ապագայ բոլոր տասնամեակները ծնունդ պէտք է տան իտեալ ՆՈՐ ՀԱՅՈՒ կազմաւորումին: Անյետաձգելի անհրաժեշտութիւն է վերադաստիարակութիւնը հայ ժողովուրդին: Երեց թէ կրտսեր սերունդները ոգեշնչել ազգային-պետական նոր գաղափարախօսութեամբ մը՝ ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄ բառին տալով նոր եւ ամենէն ազնուական շեշտադրումը:

գ - Արեւելահայաստանի եւ Արցախի մեր անկախ հանրապետութիւններուն շնորհել այնպիսի միջոցներ, ուր բնակութիւն հաստատել, կառչած մնալ հայրենի հողին, տէր ըլլալ անոր սահմաններուն ապահովութեան, իր ազգաբնակչութեան բարեկեցիկ վարք ու կենցաղով հրապուրուած, հայրենադարձի նոր ալիքներ թել ու թռիչք տան թէ՛ արտագաղթող զանգուածներուն եւ թէ սփիւռքահայ նորահաս սերունդներուն, որպէսզի՝ վերջնական կայքը 7 միլիոն տարասփիւռ հայութեան հանդիսանայ մերօրեայ անկախ հայրենիք՝ Հայաստանի Հանրապետութիւնը:

Ուրեմն, հարկ է որ օգտագործենք հնգամեայ ծրագրաւորումի կանոնակարգը:

Անկախութեան թուականէն մինչեւ այսօր, քառորդ դար սահեցաւ: Նոյնքան տարիներ՝ երկրաշարժի անխուսափելի պատուհասէն: Տակաւին վերքը չէ սպիացած բազմահազար ընտանիքներու սիրտին խորը: Անօթեւան տնակներու մէջ պատսպարուող ընտանիքներ քառորդ դարէ ի վեր օգնութիւն կ'աղերսեն հայրենի իշխանութենէն: Այսուհետեւ, երկրաշարժի իւրաքանչիւր տարելիցի թուականը պիտի կոչուի «Ամօթի Օր», որուն



սրբագրութիւնը կը կարօտի Հայաստան Համահայկական Հիմնադրամին օրինակով նորաստեղծ դրամահաւաքի շարժումին:

Ժամանակն է այլեւս, որ Սփիւռքահայուն վերագրուած «ռոմանթիկ հայրենասիրութիւն»ը ստանայ «տրամաբանական հայրենակերտում» վերանուանումը: Հայ թէ օտար զբօսաշրջիկներ իրօք կը հիանան Երեւանի գեղատեսիլ եւ շքեղ նոր շինարարութիւններով, սակայն, հիացումը կանգ կ'առնէ այնտեղ՝ ուր տակաւին հեռակայ գիւղական կենցաղային պայ-մանները կը յիշեցնեն մեզի հեռու միջնադարը: Ուրեմն, Հայրենիքին բարգաւաճումը պէտք չէ սահմանափակել հմայքովը քաղաքամայր Երեւանին:

դ - Ամէն անգամ երբ կ'ողջունենք Նոր Տարուան գալուստը, մեզ կը մտահոգեն մեր անկատար մնացած իդէերուն ճակատագիրին հետ առնչուած հարցերը:

Ներկայ Ամանորը 2015 թուականը կը կրէ:

Որքա՛ն երազ ու տեսիլք, յուսավառ տենչեր ու ծրագիրներ մեզ անակնկալներով պիտի դիմաւորեն:

Ըլլանք իրատես՝ բայց ոչ յոռետես, որպէսզի չըլլանք պատրանաթափ:

Քաղաքական վերիվայրումները համաշխարհային երեւոյթներ են, որոնց դիւանագիտական խաղերուն կրնան զոհ երթալ նաեւ համազգային բնոյթի մեր համակրանքներն ու հակակրանքները:

Հայաստանն ու հայ ժողովուրդը միջազգային մեծ ընտանիքին մէկ չնչին տոկոսը կը կազմեն: Քաջաբար դիմագրաւենք մեր գոյութեան սպառնացող բոլոր մարտահրաւերները:

2015 թուականը միայն 100րդ տարելիցը չէ հայ ժողովուրդին մեծ ողբերգութեան: Այլ, հայկական նոր մտածելակերպի, արդիական ու գերարդիական մտայղացումներու Առաջին տարին:

Ազգային «կորուսեալ ժամանակ»ի որոնումի նոր սկիզբ մը:

Այս մտածումներով կ'ողջունենք Դարադարձը Ապրիլեան Ցեղասպանութեան:

Խոհեր ու Հարցումներ Նոր Տարուայ Սեմին Մինաս Գոճայեան,

Երուսաղէմ, 26 Դեկտեմբեր 2014

Ապրիլեան Ցեղասպանութեան դարադարձը այնքա՛ն մօտեցած է մեզի, ու «Ժամանակ-դատաւոր»ը պիտի հանդիսանայ այնքա՛ն իրաւախո՛հ ու դաժա՛ն մեր ամէնօրեայ դանդաղ եւ անպատրաստ վերաբերմունքին հանդէպ, որուն համար դժուար է պատասխան մը գտնել:

Քանի մը տասնամեակներէ ի վեր, Յեղասպանութեան իւրաքանչիւր «տարելից» կը հանդիսանայ «հանգրուան մը» մեզ աւելի՛ եւս իմաստնացնող եւ զգաստացնող: Սակայն, այն ինչ որ իրականութիւն դարձաւ անցնող հարիւրամեակի Բ. կէսէն ետք, «ընդունելի» համարուելով հանդերձ, մնաց լոկ՝ իբրեւ երեւոյթ, բայց ո՛չ խորք:

Այո՛. երեւութական ցուցանիշներ են կատարուած համաժողովները եւ ուխտագնացութիւնները, սակայն՝ անոնք մնացին մակերեսը այն խորախորհուրդ խորքին, որուն չհասան մեր կարելիութիւններն ու կարողութիւնները:



Վերապրող սերունդին պարտքն ու պարտականութիւնն էր, անմիջապէս ետք Արեւմտահայաստանի պարպումէն, ձեռնարկել մօտիկ անցեալին մաս կազմող, մեր պապենական հողին վրայ մեր արձանագրած կորուստին, մարդկային, հողային, կալուածային, բարոյամտաւորական ու գրական-գեղարուեստական հարստութիւններու վիճակագրութիւնը: Եւ այս՝ հիմնուած իրաւագիտական հիմունքներու վրայ: Լուսանկարներու ընկերակցութեամբ:

Առաջին կիսադարուն, եթէ ժամանակի մեր ղեկավարները չկարողացան պատրաստել, ինչո՞ւ համար Բ. կիսադարուն Յեղասպանութիւնը մնաց միայն իբրեւ «Հայկական հարց» ու չվերածուեցաւ «Հայ Դատ»ի, նախաձեռնութեամբը ազգը ղեկավարող կազմակերպութիւններու: Բոլորս ալ, շատ լաւ գիտենք, թէ դատական թղթածրարները փոքր թէ մեծաչափ ոճիրներու պարագային, իրաւական ինչպիսի նախապատրաստական աշխատանք կը պահանջեն: Եւ նման դատավարութիւնները կըլլան դատական հետապնդումներով եւ իրաւաբանական լրջագոյն գործելակերպով: Վերջին, երեք տասնամեակներու ընթացքին, բազմիցս արտայայտուած ենք այս ուղղութեամբ, թէ փոքրածաւալ ոճիրներ երբ իրենց փաստաբանը կ'ունենան, ինչո՞ւ համար, միջազգային մակարդակի վրայ պիտի չբարձրացուէր 1915-23ի Հայոց վրայ գործադրուած ցեղասպանութիւնը, մե՛ր իսկ պապերու հայրենի հողին վրայ, որ մեծապէս կը տարբերի այլուր իրագործուած ողջակիզումներէն, որու առաջին օրինակը հանդիսացաւ հրէական հոլոքոսթը:

Ուրեմն, շատ պարզ է: Ունեցանք «Հայ Դատ» անունը կրող մարմիններ, սակայն՝ միջազգային դատ-դատաստանին չենք կրցած ներկայանալ իբրեւ տարագիր «Հայ Ժողովուրդ»ը ներկայացնող «Համասփիւռքեան կեդրոնական Միացեալ Մարմին»:

Ու ցաւօք սրտի, անկախ Հայաստանի Հանրապետութեան երկրորդ նախագահին իսկ կը յայտարարէր, թէ «իրաւական հիմքեր կը պակսին մեզի» նման պահանջատիրութեան մը համար: Մինչ՝ Խորհ. Հայաստանի վերջին տասնամեակներու դիւանագիտական ներկայացուցիչներէն՝ պատմագէտ Ճոն Կիրակոսեան, իր պաշտօնավարութեան տարիներուն, բազմահարի՛ւր էջերով հատորներ հեղինակած էր «յանուն արդարադատ ճշմարտութեան» ու զանոնք յանձնած Միջազգային ատեաններու ուշադրութեան:



Երբ այս է տիրող ընդհանուր վիճակը, մեզի կը մնայ անգամ մը եւս վերաքաղ մը կատարել ցարդ իրագործուածին եւ մեր ունեցած թերացումներուն:

Գիտակից ու հայ ապագայով տառապող մարդիկ ծանր մտահոգութիւններով կը փակեն հին տարին և աւելի ծանր խոհերով կը դիմաւորեն 2015-ը: Վաղուան հայ ապագայով հայերս աւելի մոայլութեամբ կը պարտուինք ի տես այն լեռնակուտակ մարտահրաւերներուն, խնդիրներուն, տասնամեակներու հնութիւն ունեցող անլոյծ մնացած հարցերուն և մեր առջեւ ծառացած նորերու, երբ հաշուեկշիռը կ'ընենք անցնող տարուան (և տարիներուն) մեր գործունէութեան:

Ինչպէ՞ս չփախցնել քունը, մանաւանդ երբ քանի մը օրէն պիտի թեւակոխենք 2015-ը՝ Հայկական Յեղասպանութեան 100-ամեակի տարին:

Առարկայական հաշուեկշիռը քննելով, անցնող տարին դժուար թէ կարելի ըլլայ որակել «նուաճումներու տարի» և այս ընթացքով ու այս ուժերու վատնումով ալ գալիքը որակել «նորի սկիզբ» մը:

Սկսելով մեր ամենէն հին կառոյցէն՝ Հայաստանեայց առաքելական եկեղեցին, փաստօրէն մենք յայտնուեցանք ու խելացնոր արագութեամբ մխրճուեցանք նոր ճգնաժամի մը մէջ: Առանց նոյնացնելու Լուսաւորչակերտ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը իր այսօրուան դեկավարութեան հետ, մեր հաւատքի կեդրոնի նորօրեայ տիրակալները իրենց անհեռատես, եսակեդրոն ու մեծապետական դատումներով ու տնօրինումներով փաստօրէն մեր եկեղեցին առաջնորդեցին այսօրուան անցանկալի ու ամչցնող կացութեան մը, ուրկէ նուազագոյն վնասով դուրս գալու համար հաւանաբար քանի մը տարիներու պէտք պիտի ունենանք:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ միւս խնդիրն ալ Կիլիկիոյ կաթողիկոսութեան հետ իրաւական ու աշխարհագրական ոչ մէկ կապ ունեցող իրանահայ թեմին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին տակ գտնուիլն է, երբ պատմութիւնը յստակօրէն արձանագրած է այն հանգամանքները, որոնց պատճառով դարերով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ջերմեռանդօրէն կապուած իրանահայութեան թեմը «անցաւ» Կիլիկիոյ տնօրինութեան, երբ իրանահայութեան ոտքին մէկը Հայաստան է այսօր, ուր հասնելուն պէս առաջին գործը կ'ըլլայ ծնրադրել և ապա մոմ վառել Միածնաէջ խորանին առջեւ...: Ինչո՞ւ: Փնտռեցէք և կը գտնէք պատասխանը մենատիրութեան մոլուցքով տարուած քաղաքական կողմի մը արխիւներուն մէջ: Թէեւ արդար ըլլալու համար յիշենք որ Հայաստանեայց Եկեղեցին Իրանի մէջ շօշափելի գործ կատարած է Հայ Դատն ու Պահանջատիրութիւնը իր օրակարգին վրայ պահելով միշտ:

Մեր հայրենիքին մէջ հոս ու հոն նկատուող կարգ մը առողջ ու շինիչ համեստ ճիգերը կը նսեմանան ի տես արտագաղթ-արիւնահոսութեան: Ոչ միայն բարելաւում չի նկատուիր այս բնագաւառէն ներս, այլեւ տակաւ կը շարունակուի մեր ուղեղահոսքը դէպի Ռուսաստան, Եւրոպա և ովկիանոսներէն անդին: «Ուր հաց, հոն կաց» գնչուական հոգին յաղթած է կարծես, ու այս բոլորին վրայ վերջերս աւելցաւ նաեւ ԱՄՆ-ի կողմէ տասը տարուայ արտօնագիր (վիզա) շնորհելու հեռակայ կարգով վնասակար համաձայնութիւնը: Ահաւասիկ



«աւետիս» մը եւս այս օրերուն՝ ԱՄՆ-ի ափերը երագող հայերուն: Ասկէ լաւ նուէր չ'ակնկալէր Թուրքիան այս օրերուն...:

Մտահոգիչ չէ հապա ի՞նչ է այն երեւոյթը, երբ հայկական վարժարաններ յաճախող աշակերտներու թիւը աճ չէ արձանագրած անցնող տարեշրջանին՝ Միջին Արեւելքին մինչեւ ովկիանոսամերձ ցամաքամասերը: Մինչդեռ կար ժամանակ մը, երբ արտերկրի տարածքին ապրող հայ ծնողքները, յատկապէս Միջին Արեւելքի մէջ, արդար հպարտութեամբ կը նշէին թէ իրենց զաւակները այսինչ հայկական վարժարանը կը յաճախէին ու կը յաջողէին տեղական պետական քննութիւններու մէջ փայլուն արդիւնքներով:

Ինչո՞ւ ամէն ինչ գլխիվայր շրջուեցաւ: Պատճառները հաւանաբար պէտք է փնտռել հայ դպրոցի մասին հայ ծնողներու ունեցած խիստ քաղքենի ու մոլի գործնապաշտ մօտեցումներուն շրջագիծէն ներս:

1915-ին տեղի ունեցաւ դարուս առաջին ցեղասպանութիւնը (նորէն «առաջինի պատիւը» կ'երթայ հայ ժողովուրդին): Հոս ու հոն կամ քիչ մը ամէն տեղ կը տեսնենք 100-ամեակի ոգեկոչման ազդեր, ծրագիրներ ու միջոցառումներ՝ բոլորն ալ արժանի պատշաճ գնահատանքի: Բայց տակաւին չենք յաջողած ստեղծել ՀԱՄՕՐԷՆ, ԱԶԳՈՎԻՆ ու ՄԷԿ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ծրագիր, որով առաջնորդուին բոլորը և որուն մէջ ԲՈԼՈՐԸ ունենան իրենց ներդրումը: Սփիւռքէն ետ չի մնար նաեւ հայրենի պետութիւնը իր անորոշ, մշուշոտ ու խանդավառութիւն չներշնչող «ծրագիրներով», իսկ տարեփակէն հազիւ շաբաթ մը առաջ Երեւանէն կը հնչէ Յեղասպանութեան Թանգարանի տնօրէնին ծանրակշիռ ամբաստանութիւնները հայկական ցեղասպանութեամբ զբաղող մատի վրայ համրուող պատմաբաններուն դէմ:

Ինչո՞ւ չ'մտահոգուիլ ու չ'ափսոսալ այն թանկագին առիթներուն համար միջազգային շրջանակներէ և գիտահետազօտական հաստատութիւններէ ներս մտահոգիչ ըլլալու աստիճան նօսրացած հայազգի պատմաբաններու թիւին ի տես: Հաւատքն ունէինք որ գոնէ ԱՄՆ-ի ու Արեւմուտքի այլ ոստաններու կեդրոններուն մէջ անցնող տասնամեակին մենք պիտի կարենայինք մեր խօսքը լսելի դարձնել, մինչ Թուրքիոյ և Ագրպէյճանի համապատասխան կառոյցները յստակ ծրագիրներով յառաջ կը տանին իրենց քարոզչական աշխատանքը: (Վերջերս մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ կայացած գիտական համաժողովի մը շուրջ հազար մասնակիցներուն ներկայացուցած նիւթերուն 200 կ'առնչուէին Միջին Արեւելքին, նիւթերուն 160-ը ներկայացուած էր Թուրքիոյ կողմէ, իսկ հայերու թիւը...4):

Յստակ է պատկերը և ակնյայտ են պատճառները: Անըջութիւն Հայ Դատի ու Պահանջատիրութեան հետապնդման հանդէպ, անպատրաստուածութիւն, հետաքրքրութեան զգալի նահանջ, նուիրուածութեան ու յանձնառութեան թաւալզոր անկում մեր ԲՈԼՈՐԸ կառոյցներուն կողմէ՝ Հայաստանէն մինչեւ ովկիանոսներէն անդին:

Թուրքիա վաղուց անցած է գետը, իսկ մենք տակաւին կը մտածենք ուր շինել կախովի կամուրջ մը:



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

ԱՊՐԵԼՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԸՄարմնիդ բոլոր բջիջներով ու զգայարանքներով պիտի խորզգաս զայն, սիրտդ ու հոգիդ բաց՝ բնութեան եւ աշխարհի թրթիռներուն, տերեւներու խշշոցէն մինչեւ հեւքը յոգնած օրուան....միտքդ բաց՝ տիեզերքի չորս ծագէն եկող խոհերուն, որոնք՝ զերթ կայծեր, կը փայլատակեն յանկարծօրէն մտքիդ մէջ, կ'այցելեն անակնկալօրէն



օրուան մէկ տարածամին....Կարելի է՝ միթէ անգոր բառերով արտայայտել լիարժէք Կեանքի ամբողջ խորութիւնը, նրբութիւնը, հարստութիւնը, բերկրանքը...Բառերը կը կաղապարեն անկաղապարելին, կը տարազեն անտարազելին...: Կեանքի, ապրելու տարերքին դիմաց՝ պիտի ըլլաս անբառ ու մերկ....

.....

Օրը կը բացուի, բարին՝ իր հետ....Այսպէս է հաւատացեր մեր ժողովուրդը դար ու դարեր, հայեացքը յառած լոյսին եւ յոյսին, իր երկնամերձ լեռներու բարձունքին, Արագածի վրայ պլպլացող Լուսաւորչեան կանթեղին անմար....եւ այդ ոգիով է արարեր իր արուեստի գանձերը, երկներ է գիր ու գրականութիւն, ոգեղէնութիւն դրեր՝ իր քարերուն, զանոնք վերածելով տաճարի ու խաչքարի.... այսպէս է ապրեր ան՝ բարին, գեղեցիկն ու վսեմը դարձնելով Կեանքի Իմաստ, Կեանքի Խորհուրդ....Լոյսի այս առաքելութիւնը աւելի քան էական է, մասնաւորապէս ներկայիս՝ բարոյական, հոգեւոր, մշակութային....ճգնաժամի մէջ յայտնուած աշխարհին մէջ....

.....

Անբացատրելի Կենսոյժ մը կ'արթնցնէ ամէն առաւօտ բնութիւնը համակ.....արեւը կը սփռէ իր ճառագայթները ոսկեգօծ, թռչունները կը դայլայլեն ցնծագին, ծաղիկները կը բանան իրենց թրթիկները արեւուն....մարդ էական ալ՝ այդ կենսոյժով արբշիռ, կը թօթափէ իր յոգնութիւնը, նոր կեանքով կը վարարի ամէն Աստուծոյ օր....Ի՛նչ խորհրդաւոր պատարագ, որ կը մատուցուի ամէն օր, կեանքին ի խնդիր, ապրելու ուրախութեան ի խնդիր, շնչելու եւ բարին արարելու երանութեան ի խնդիր....Եւ այս ամէնը այնքան սովորական է, այնքան բնական, որ չենք ալ նկատեր այն Հրաշքը, որուն ականատեսն ու ականջալուրը կ'ըլլանք մեր ամէնօրեայ կեանքին մէջ, մշտապէս կրկնուող յաճախականութեամբ....

.....

Առօրեայ տաղտուկը, մանրութիւնները, նիւթականը ապահովելու միտումն սպառնիչ աշխատանքները մեզ անչափ կը հեռացնեն՝ մեր հոգիէն, կեանքի խորհուրդը խորզգալու, գեղեցիկը տեսնելու եւ արարելու, բուն իրականութիւնն ու ճշմարիտը յայտնաբերելու, վսեմին ձգտելու գերագոյն նպատակներէն....ի վերջոյ ապրելու միջոցները շփոթեցնելով կեանքի գերագոյն նպատակներուն հետ...: Մեր առօրեայ կեանքի հեւք ու վազքին մէջ, շատ ուշ կ'անդրադառնանք, որ կորսնցուցած ենք էականը, մարդը մարդ դարձնող այն բոլոր



բարձրագոյն արժէքներն ու իտէալները, որոնք հողակալիկ, գետնաքարշ կեանք մը կ'ընծայեն վսեմ, գեղեցիկ փորձառութիւն մը, լոյսին ձգտելու յանդուգն ճանապարհորդութիւն մը....

.....

Որքա՛ն սրընթաց կը փոխուի աշխարհը, մարդ էակն ու մարդկային ընկերութիւնն ալ անոր հետ համընթաց: Դեռ մէկ երկու տասնամեակ առաջ, ամբողջովին այլ էր ան: Դեռ բաւականին առոյգ կը գործէին մարդկային միտքն ու սիրտը, դեռ չէր բրտացած մարդկային հոգին.... մարդ էակը այնքան չէր մեքենայացած, որքան այսօր..., ինչ որ չափով, մարդկային խիղճը դեռ չէր քարացած կամ բթացած...: Կար մանաւանդ մարդ էակին արժանաւորութիւնը, որ տակաւ կը նուազի, սարսափ ազդելու չափ....Ի՞նչ պիտի ըլլայ աշխարհը քանի մը տասնամեակ ետք: Կա՛մ գահավէժ պիտի ընթանայ դէպի «Մրջնանոց» դառնալու իրականութեան գիրկը, կա՛մ ալ, ո՛վ գիտէ, մետասաներորդ ժամուն, գուցէ զգաստանայ եւ բռնէ հոգեւոր-բարոյական վերադարձի ճամբան....

.....

Երջանկութեան էական բաղադրատարր է այլազանութիւնը....Եթէ ամէն ծաղիկ ու ծառ, թուփ ու տերեւ յար եւ նման ըլլային մէկգմէկու, ի՞նչ հմայք պիտի ունենային անոնք: Նոյնը կարելի է ըսել մարդ էակին եւ ազգերու համար: Եթէ ըլլային անոնք ամբողջովին նմանատիպ, նոյնական, ի՞նչ ձանձրալի պիտի ըլլար կեանքն ու աշխարհը առհասարակ...: Այլազանութիւնն է որ իւրաքանչիւրին կու տայ իր ինքնուրոյն հրապոյրը, անհատական յատկանիշը, որ նման չէ միւսին...: Իսկ մեր ներկայ մեքենայացած կեանքը որքա՛ն կը միտի սպաննել այդ այլազանութիւնը....

.....

Ամբողջ կեանք մը որոնումներու մէջ ենք՝ գիտակից թէ անգիտակից...: Կ'որոնենք այն լոյս-փարոսը որ ուղեցոյց դառնայ մեզի՝ կեանքի բարդ ոլորաններուն....Կ'որոնենք կեանքի այն բուն Իմաստը, զոր այդպէս ալ չկրցանք գտնել....Կ'որոնենք ա՛յն սրտակից, հոգեկից, խոհակից ընկերը, որ իտէալ ու երազ մնաց միայն....Կ'որոնենք դեռ մենք զմեզ, մեր բուն, խորքային ԵՍ-ը, որուն ներքին ձայնը քիչ անգամ հասաւ մեզի....Բայց այդ որոնումներն են որոնք լեցուցին մեր ներաշխարհը եւ կը լեցնեն դեռ, մեզ պահելով իրենց յուզա-իմացական շարունակական շարժումին մէջ:

Շատ քիչեր կը դիմանան դրամի գայթակղութեան, ոսկիի փայլին, բարձր պաշտօնի խայծին....Քանիներ ճանչցած եմ որոնք ամպագորգոտ բառերով սկզբունք մը, գաղափար մը կամ արժէք մը պաշտպանած են, բայց յետոյ դիւրաւ զիջած են իրենց դիրքերէն, երբ սեփական Շահը խնդրոյ առարկայ է դարձած....Փորձութեան ահեղ պահերուն միայն, կարելի կ'ըլլայ թափանցիկ կերպով տեսնել մէկու մը իրաւ հաւատարմութիւնը՝ իր պաշտպանած արժէքներուն....Մնացեալը փուճ խօսք է եւ ուրիշ ոչինչ:

.....

Միշտ ալ կը պանծացնենք, կը փառաւորենք Մէրը, մանաւանդ մեր գիր ու գրականութեան մէջ..., կ'իմաստաւորենք ու կ'արժեւորենք զայն: Այսուհանդերձ, Մէրը կը մնայ մեր ազգային-



հաւաքական կեանքին մեծ բացական...Մերն է, որ կրնայ մեր մօտ՝ գուր ու կարեկցանք, ազնուութիւն, վեհանձնութիւն, իրերօգնութիւն, խոնարհութիւն....եւ այլ առաքինութիւններ ներշնչել: Մերը հրաշքներ կրնայ գործել ազգին ու հայրենիքին համար, անխարդախ, անդաւաճան եւ անկեղծ Մերը...Որքա՛ն ճիշդ է ըսուած. «Ճշմարիտ սէր մերժէ զերկիւղ», ինչ որ կարելի է մեկնաբանել՝ ճշմարիտ սէրը կը յաղթահարէ ամէն վախ ու փոքրոգութիւն, եւ պիտի աւելցնէ՝ ամէն դժուարութիւն եւ խոչընդոտ....

.....

Առօրեայ հանգիստի գօտիէդ եթէ ջանդգնիս դուրս գալ՝ դէպի անծանօթն ու անսովորը..., յայնժամ կը լճանաս, կը ճահճանաս՝ մարմնով, մտքով ու հոգիով...Մարդ արարածը միշտ ալ էական կարիքը ունի փորձառութեան նոր գրգիռներու, խթանելու համար իր կարողութիւններն ու կարելիութիւնները, վերակենսաւորուելու եւ վերանորոգուելու համար.....

.....

Կարելի չէ բանտել մարդկային հոգին բոլոր ժամանակներու համար կամ ընդմիշտ....Գուցէ ան որոշ ժամանակով լռութեան մատնուի, կամ նիրհէ էութեան խորքերուն մէջ, բայց ի վերջոյ՝ ան պիտի պոռթկայ, ընդվզի ու ըմբոստանայ, փշրէ զինք բանտող կապանքները եւ ազատ արձակէ ինքզինք....Հոգին ի բնէ ԱԶԱՏ ըլլալու դատապարտուած է....

.....

Այնքա՛ն խոր կարօտը ունիմ Հայրենեաց Հողին, որուն հարազատ ծոցին մէջ միայն կարելի է ըմպել հայ տոհմիկ մշակոյթի ակունքներէն բխող՝ հայ երգն ու տաղը, հայ Բառն ու Բանը...., գտնել սեփական հարազատ հոգին, թօթափել օտար ու խորթ տարրերը, որոնք շարունակ կը դիգուին Հայ Հոգիին վրայ՝ այս օտար ափերուն վրայ, աղարտելով անոր բիւրեղեայ, զուլալ մաքրութիւնը....Հայ հոգին իր հողին վրայ միայն կրնայ ինքնօրէն ուռճանալ, ընձիւղիլ, ծաղկիլ....արտայայտել ինքզինք իր ուրոյն բոյրով ու թոյրով, ինքնատիպ ոգիով ու նկարագրով, իր ամբողջական հարազատ գեղեցկութեամբ....

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՆՈՅՆՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2014 – ՅՈՒՆՈՒԱՐ 2015


Էջեր ԱՐԵՒՄՏԵԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵՆԷՆ

Թարգմանութեամբ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԻ

Պարբերաբար, մեր ընթերցողներուն պիտի հրամցնեմ՝ Էջեր Արեւմտեան Մտածողութենէն, տարիներու ընթացքին իմ կողմէ՝ անգլերէնէ հայերէնի թարգմանուած յայտնի փիլիսոփաներու երկերէն Էջեր, նպատակ ունենալով իմ համեստ լուման ներդնել միասնաբար հայերէն մտածելու յոյժ կարեւոր նպատակին կենսագործման: Էջերու ընտրութիւնը պիտի ըլլայ ո՛չ ժամանակագրական հերթականութեամբ, ո՛չ ալ նիւթերու որեւէ շաղկապուածութեան հիմքի վրայ: Այս թիւով, պիտի ուզէի թարգմանաբար ներկայացնել Պերթրանտ Ռասելի (Bertrand Russell) «Դաստիարակութիւն»էն հատուածներ: Ե. Գ.

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ (Հատուածներ) BERTRAND RUSSEL (1872-1970)

Ուսուցիչին իմաստութեան կրաւորական ընկալումը դիրքին է տողոց եւ աղջիկներու մեծամասնութեան համար: Անիկա չենթադրեր անկախ մտածողութեան ճիգ եւ կը թուի բանական ըլլալ, որովհետեւ ուսուցիչը աւելի գիտէ քան իր աշակերտները: Աւելին, անիկա



կերպ մըն է սիրաշահելու ուսուցիչը, բացի եթէ վերջինը շատ բացառիկ մարդ մը ըլլայ: Սակայն, կրաւորական ընկալումի սովորութիւնը աղիտալի է յետագայ կեանքի համար: Պատճառ կը դառնայ ան՝ որ մարդիկ առաջնորդ մը փնտռեն եւ որպէս այդպիսին ընդունին ոեւէ մէկը որ հաստատուած է այդ դիրքին վրայ: Անիկա կը կազմէ ոյժը եկեղեցիներու, կառավարութեանց, կուսակցական մարմիններու եւ բոլոր միւս կազմակերպութեանց, որոնց միջոցով պարզ մարդիկ կ'առաջնորդուին պաշտպանելու ազգը եւ իրենց վնասաբեր հին համակարգեր: Կարելի է որ՝ մտածողութեան շատ անկախութիւն պիտի չըլլար՝

նոյնիսկ եթէ դաստիարակութիւնը ամէն բան ընէր զայն յառաջացնելու համար: Բայց որոշապէս աւելին պիտի ըլլար, քան ա՛յն որ կայ ներկայիս:

Եթէ դաստիարակութեան նպատակը ըլլար՝ աշակերտներուն մտածել տալը, աւելի քան անոնց որոշ եզրակացութիւններ ընդունիլ տալը, յայնժամ շատ տարբեր ձեւով պէտք էր դեկավարուէր ան: Ուսուցումը պիտի ըլլար նուազ արագընթաց: Վիճաբանական քննարկումը պիտի ըլլար շատ աւելի, ինչպէս նաեւ՝ առիթները, ուր աշակերտներ քաջալերուէին արտայայտելու իրենք գիտէին: Աւելի մեծ ճիգ ի գործ պիտի դրուէր, որպէսզի դաստիարակութիւնը զբաղէր այնպիսի հարցերով, որոնք, որոշ չափով, կը հետաքրքրեն աշակերտները:



Ամէն բանէ վեր, ճիգ ի գործ պիտի դրուէր յառաջացնելու եւ խթանելու համար սերը մտային արկածախնդրութեան հանդէպ: Աշխարհը ուր կ'ապրինք բազմազան է եւ զարմացնող: Կարգ մը բաներ, որոնք կը թուին պարզագոյնը ըլլալ, աւելի ու աւելի բարդ կը դառնան, երբ առաւել նկատողութեան ենթարկենք զանոնք: Ուրիշ բաներ, զորս գտնելը գրեթէ անկարելի պիտի համարուէր, յայտնաբերուած են այնուհանդերձ՝ հանճարի ոյժով եւ աշխատանքով: Մտածումին ոյժը, այն լայն տարածքը զոր կրնայ նուաճել ան, դեռ աւելի ընդարձակ տարածքը զոր կրնայ ան միայն աղօտ կերպով թելադրել երեւակայութեան՝ կը պարզեւեն նիւթի հիանալի հարստութիւն մը, ճղճիմ եւ յոգնեցուցիչ առօրեայէն փախուստ մը՝ բոլոր անոնց համար, որոնց միտքը ճամբորդած է առօրեայ շրջագիծէն անդին, համակ կեանքը լեցնելով հետաքրքրութեամբ՝ տափակութեան բանտէն ձերբազատ...: Այս ուրախութեան պարզեւումը, առաւել կամ նուազ չափով, բոլոր անոնց որոնք ընդունակ են անոր՝ կը կազմէ մտքի դաստիարակութիւնը արժէտորդող գերագոյն նպատակը:

....Մտածումը մեծ է, արագընթաց եւ ազատ, լոյսը աշխարհին եւ գլխաւոր փառքը մարդուն:

....Բայց եթէ մտածումը պիտի դառնայ շատերու ունեցուածքը եւ ոչ քիչերու մենաշնորհը, յայնժամ պարտինք յաղթահարել վախը: Վախն է որ ետ կը կեցնէ մարդիկը – վախը՝ թէ իրենց փայփայած հաւատքները կրնան ապացուցուիլ որ պատրանքներ են սոսկ, վախը՝ թէ հաստատութիւնները, ուր կ'ապրին իրենք, կրնան վնասաբեր ըլլալ ապացուցուիլ, վախը՝ թէ նոյնինքն իրենք կրնան փաստուիլ ըլլալ նուազ յարգարժան, քան ինչ որ կ'ենթադրեն ըլլալ...:

Ոչ մէկ հաստատութիւն, որ վախէ կ'առնէ իր ներշնչումը, կրնայ կեանքը աւելցնել: Յոյսը, ոչ թէ վախը, ստեղծագործ սկզբունքն է մարդկային գործունէութեանց: Ամէն ինչ որ մարդը մեծ ընծայած է՝ յառաջ եկած է բարին ապահովելու ճիգէն, ոչ թէ չար նկատուածը վանելու պայքարէն: Մեծ յոյսէ մը ներշնչուելու այնքան հազուադէպ փաստն է, որ պատճառ է դարձած որ արդի դաստիարակութիւնը հազուադէպօրէն ձեռքբերէ մեծ արդիւնք մը: Անցեալը պահպանելու փափաքը աւելի կը տիրապետէ միտքերը անոնց՝ որոնք կը կառավարեն նոր սերունդին ուսուցումը, քան ապագան ստեղծելու յոյսը: Դաստիարակութիւնը պէտք չէ նպատակաւորօրէն մեռեալ իրականութեանց կրաւորական գիտակցութեան, այլ՝ գործունէութեան մը, որ կ'ուղղուի դէպի այն աշխարհը զոր մեր ճիգերը պիտի ստեղծեն: Անոր ներշնչման աղբիւրը պէտք է ըլլայ՝ ոչ թէ ավստասալի կարօտանքը Յունաստանի եւ Վերածնունդի ոչնչացած գեղեցկութեանց, այլ պիտի ըլլան՝ լուսեղէն տեսիլքը գալիք ընկերութեան, այն յաղթանակները զորս մտածումը պիտի ձեռքբերէ գալիք ժամանակներուն, եւ տեւաբար ընդլայնող հորիզոնը մարդուն տիեզերական հայեացքին: Անոնք որոնք այս ոգիով կ'ուսուցանուին պիտի համակուին կեանքով, յոյսով եւ երջանկութեամբ, պիտի կարենան իրենց բաժինը ստանձնել՝ պարզեւելու համար մարդկութեան այնպիսի ապագայ մը, որ նուազ տխուր ըլլայ անցեալէն, հաւատալով այն փառքին զոր մարդկային ճիգը կրնայ ստեղծել: